

1467

Yucca hlt & impy jnd

3K23  
4-49

345

17p



Գ. Ի. ԼԵՆԻՆ

ԿՊԸՀԵ՞Ն ԱՐԴՅՈՒ  
Բ Ո Լ Ը Ե Վ Ի Կ Ն Ե Բ Ն  
ԵՐԵՆՑ ԶԵՄՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ  
Ի Ե Խ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ի Ն Ը

335/65  
L-85

ԿՈՒՍԴՐԱՑ

1934

ՅԵՐԵՎԱՆ

26 MAY 2005

10.09.2013

3K93

4-79

4.

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ԿՊԱՀԵ՞Ն ԱՐԴՅՈՒ  
ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐՆ ԻՐԵՆՑ  
ԶԵՌՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

36264

476

Խոստենից քաղմանց՝ Ա. ԽՈՆԴԿՈՒՅՈՆ  
Խմբագրեց՝ Հ. ԳԱՍՊԱՐՅՈՆ

477



1934

Օ Ե Ր Ե Վ Ա Ն

ԿՊԱՀԵ՞Ն ԱՐԴՅՈՒՔ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐՆ ԻՐԵՆՑ ԶԵՌՔԻՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԸ

Ի՞նչ բանում են համաձայն բոլոր ուղղությունները,  
«Речь»-ից մինչև «Новая Жизнь»-ը ներառյալ կադեմակորնիլով-  
յաններից մինչև կիսարութեակները, բոլորը, բացի բոլշևիկներից:  
Նրանում, վոր բոլշևիկները մենակ կամ յերբեք չեն հա-  
մարձակվի ամբողջ պետական իշխանությունն իրենց ձեռքը վերց-  
նել կամ, յեթե վճռեն ու վերցնեն՝ անկարող կլինեն պահել այն  
իրենց ձեռքին նույնիսկ ամենակարճ ժամանակով:

Յեթև մեկն ու մեկը նկատի, վոր ամբողջ պետական իշխա-  
նությունը բոլշևիկների կողմից մենակ վերցնելու հարցը—բո-  
լորովին անիրական քաղաքական հարց ե, վոր համարել այն  
իրական կարող ե միայն վորևել «Փանատիկոսի» ամենավատ ինք-  
նահավանությունը, — ապա մենք կժխտենք այդ դիտողու-  
թյունը, բերելով ամենապատճանատու և ամենաազգեցիկ քա-  
ղաքական կուսակցությունների ու տարբեր «գույնի» ուղղու-  
թյունների ամենածառորոշ հայտարարությունները:

Բայց նախ և առաջ յերկու խոսք նշված հարցերից առաջնի  
առթիվ, այն ե՝ կհամարձակվեն արդյոք բոլշևիկները մենակ  
իրենց ձեռքն առնել ամբողջ պետական իշխանությունը: Յես ար-  
դեն առիթ ունեցել եմ Խորհուրդների Համառուսական համագու-  
մարում պետականելու այդ հարցին վճռական դրական պնդու-  
մով՝ մի դիտողության մեջ, վորը յես հարկադրված եյի բարձրա-  
ձայն գոչել իմ տեղից՝ Ծերեթելու մինխարական ճառերից մեկի  
ժամանակ: Յեզ յես չեմ հանդիպել վոչ մամուլում, վոչ բանավոր  
հայտարարությունների՝ բոլշևիկների կողմից, թե մենք իշխա-  
նությունը մենակ չպետք ե վերցնենք մեր ձեռքը: Յես շարունա-  
կում եմ կանգնած մեալ այն տեսակետի վրա, վոր քաղաքական

В. И ЛЕНИН

Удержанят ли большевики  
государственную власть?

կուսակցությունն ընդհանրապես,—իսկ առաջավոր դասակարգի կուսակցությունը առանձնապես, — չեղ՝ ունենալ գոյության իրավունք, կուսակցություն կոչվելու անարժան կլիներ, վողորմելիք զերս կլիներ բոլոր տեսակեաներով, յեթե հրաժարվեր իշխանությունից, յերբ իշխանություն ստանալու հնարավորություն կա:

Այժմ բերենք կաթուտների, ևսերների և կիսաբռլշեների  
(յես ավելի մեծ հաճույքը կասեց՝ քառորդական բոլշևիկների)  
հայտարարությունները մեղ հետաքրքրող հարցերի առթիվ:

«Речь»-ի սեպտեմբերի 29 (16)-ի առաջնորդողը.

... Տարածայնություն և տարակարծություն եր թագավորում Ալեքսանդրինուի թատրոնի\* դահլիճում, և սոցիալիստական մամուլն անդրադառում և նույն այդ պատկերը վորոշակիությամբ և ուղղագծությամբ աչքի յի ընկնում միայն բոլէկիների տեսակետում Խորհրդակցության մեջ այդ—փոքրամասնության տեսակետն է: Խորհուրդներում այդ — ավելի ու ավելի ուժեղացող հոսանքն է: Բայց, չնայած ամբողջ բառական խիզախության, պարձենեկուա Փուազներին, ինքնավատահության դեմոնարացիային, բոլշևիկները, բացառությամբ փոքրաթիվ ֆանատիկաների, քաջ են միայն խոսքով: Վերցնել «ամբողջ իշխանությունը» իրենց սեփական մղումով նրանք չեցին փորձի: Կազմակերպություններու ու ավերիչներ լինելով par excellence\*\*\*, նրանք ըստ եյտքյան վախտաներ՝ ևն, վոր իրենց հոգու խորքում սրանչելի կերպով գիտակցում են իրենց ներքին տպանությունը, իրենց այժմյան հաջողությունների անհարաժեշտությունը: Նույնիքան լավ, վորքան և մենք ամենքս, նրանք հասկանում են, վոր իրենց վերջնական հաղթանակի առաջին որը կիներ և իրենց որբնաթաց անկման առաջին որը: Անզատասխանատու: Իրենց ընությամբ, անարխիստներ՝ իրենց մեթոդներով ու գործողության յեղանակներով, նրանք մտածելի են միայն վորպես մենք քաղաքական մտքի ուղղություններից—ավելի ճիշտ ասած, վորպես մենքն այդ մտքի արերացիաներից \*\*\*: Բոլշևիզմից յերկար տարիներով ազատվելու, նրան տապալելու լավագույն յեղանակը կիներ՝ յերկը բախտը հանձնել նրա առաջնորդներին: Եթե յեթե չիներ նման փորձերի անթույլարելիության և կորսատաբերության գիտակցությունը, հուսահատությունից կարելի յեր և այդպիսի հերոսական միջոցի գիմեր Բարեգախտաբար, կը կնում ենք, որքա այդ տիրապետ հերոսներն իրենք բնափ չն ձգում իրոք

\* Նկատի յեւ առնվորում Դեմոկրատական խորհրդակցությունը, վորի նիստականը երին ունենում Գևառեբուրգի Ալեքսանդրինսկի թատրոնում 1917 թվի սեպտեմբերին Խոմբ։

\*\* — Փրանհական արտահայտություն, վոր նշանակում ե՝ առավելապես:

\*\*\* Աբերագիտ — շեղում, խոտորում, աղավաղութ, լսվ. 1

ամբողջ իշխանությունն իրենց ձեռքն առնելուն ինչ պայմաններ ել վոր գոյություն ունենան, նրանց մատչելի չե ստեղծագործական աշխատանքը Արագիսի սովոր նրանց ամբողջ վորոշակիլությունը և ուղղագծությունը սահմանափակվում է քաղաքական ամբոխի, միտինգային բարբառման մթնոլորտով։ Գործնականապես նրանց բանած զերը վոչ մի տեսակետից չի կարող հաշվի առնելի Բայց մի տեսակետից դա ունի և վորոշ ռեալ հետեւանք։ Նա միավորում է «սոցիալիստական մտքի» բոլոր մյուս յերանդները՝ իր նկատմամբ բացատական վերաբերմունք ունենալու իմաստով...»։

Այսպես են դատում կադեաները: Բայց ահա և Ռուսաստանի ամենամեծ «տիբրող և կառավարող» կուսակցության՝ տողիալիստ-հեղափոխականներից տեսակետը, նմանապես չստորագրված, այսինքն խմբագրական, առաջնորդող հոգվածում, վոր զետեղված և նրանց պաշտոնական որդան «Դելօ Նարոդա»-ի հոկտեմբերի 4 (սեպտեմբերի 21)-ի համարում:

«... Յեթին բուքժուազիսն չկամինա աշխատել գեմոկըստիայի հետ մինչև Սահմանադիր ժողովը՝ Խորհրդակցության հաստատած պլատֆորմի հոգի վրա, այն ժամանակ կուպիցիան վետք եւ ծագի Խորհրդակցության կազմի մեջ։ Դա—ծանր զոհաբերություն և կուլիցիայի պաշտպանների կողմից՝ բայց դրան պետք համաձայնն սայել իշխանության անխառն գծի գաղափարի արռաջանդիսությունը։ Բայց մենք յերկյուղ ենք կրում, վար այստեղ համաձայնությունը կարող եւ չկայանալ։ Յեկ այդ դեպքում մասն է յերրորդ և գերջին կոմքինացիսն՝ իշխանությունը պատրավոր է կազմել Խորհրդակցության այն ժամանք, վոր սկզբունքորեն պաշտպանում եր նրա միատարրության գաղափարը։

Առենք զրոշակի՝ ըլլշվվկները պարտավոր կիմնեն կարինեն կազմնել: Նրանք մեծագույն յեռանդով պատվաստում ենինց հեղափոխական գեմուրա- տիային առելություն դեպի կուալիցիան, խոստանալով նրան ամեն տեսակի բարեիքներ «ճամաճաճնողականության» վերացումից հետո, և այդ վերջինով բացարեկով յերկրի բարոր աղեկաներու:

Յեթև նրանք հաշիվ ելին տալիս իրենց այդ ազիտացիայի նկատմամբ,  
յեթև նրանք չեյին խարում մասսաներին, նրանք պարտավոր են վճարել աջ ու  
ձախ արվող մուռհակների համաձայն

Հարցու դրվում եւ պարզ կերպով

Յեկ թող նրանք անոցուտ ջանքեր չանեն թադակնվելու փութեստությամբ սաեղծված այս թերպիաների հետեւ, թեզիքենց համար իշխանություն վերցնելն անկարուի լեռ

Այդ թեորիաները դեմոկրատիան չի ընդունի

Մինույն ժամանակ կոստյումի կողմանի կեցները պետք ե արգահովին լրենց լիակատար աջակցությունը բուժելիներին—Ահա մեր առաջ դրված յերեք կոմբինացիաները, յերեք ճանապարհները—ուրիշները չկան» (Հնդկում-ները պատկանում են իրեն, «Դելօ Նարոդա»-յին):

Այսպես են դատում եսերները: Ահա, վերջապես, նովայա-  
ժիղնական «քառորդական բոլցիկների» «դիրքը», յեթե կարելի  
յէ յերկու աթոռների միջև նստելու փորձերը դիրք անվանել, —  
առնված խմբագրական առաջնորդողից:

«... Յեթե կոպիցիան Կոնովալովի և կիշկինի հետ նորից կաղմի,  
ապա այդ կնշանակի փոչ այլ ինչ բայց յեթե գեմոկատիայի նոր կապիտու-  
լացիա և վերացումն Խորհրդակցության բանաձեկ՝ ոգոսոսի 27 (14)-ի պատ-  
փորձի վրա պատասխանատու իշխանություն կազմելու մասին:

... Մենչեկների և եսերների միատարր մինհատությունը նույնը առան-  
քիշ կարող ե զգալ իր հաշվեառ լինելը վորշան քիշ եյին զգում այն պա-  
տասխանատու սոցիալիզմ-մինհատությունը կապացիոն կարինեառում... Այսպիսի  
կառավարությունը վոչ միայն չուիտի կարողանար իր շուրջը համախմբել հե-  
ղափոխության «կենդանի ուժերը», այլև չեր կարող հույս դնել նրա ավան-  
դարդի—պըութեարիատի փոքրիշատ գործոն աշակցության վրա:

Սակայն վոչ ավելի լավ այլ ել ավելի վատթար յելք կլիներ գրությու-  
նից, եյտես վոչ թե յելք, այլ պարզապես կործանում մյուս տիպի միատարր  
կարինեառ կազմելը—«պըութեարիատի և ամենաչքավոր գյուղացիության» կա-  
ռավարություն կազմելը: Այսպիսի լոգունդ, ճշշտ ե, վոչ վոք ել չի առաջա-  
ռում—բացի «Ռաբօնի Պուտեա-ի պատահական, անհամարձակ, այնուհետեւ  
սիստեմատիկարար «պարզաբանվող» ակնարկներից: (Այս աղաղակող սուտը  
համարձակութենա գրում են պատասխանատու հրապարակախոսներ, փորոնք մո-  
ռացել են նույնիսկ «Ալեօ Նարօայի հոկտեմբերի 4-ի (սեպտեմբերի 21-ի  
առաջնորդողը...):

Զեականապես բոլցիկները ներկայաւմս հարություն են տիել՝ տմբողջ  
իշխանությունը Խորհուրդներին լոգունդին: Այդ լոգունդը վերացել եր, յեթք  
փոք հումսյան որերից հետո, Խորհուրդները, իդեմս Կենարունական Գործադիր  
Կոմիտեյի, գորշակի բռնեցին ակտիվ հակաբուժեկյան քաղաքականության  
ձանապահնը: Իսկ այժմ վոչ միայն կարող ե շտկված համարվել Շորհրդի  
գիծը, այլև կան բոլոր հիմքերը սպասելու, վոք Խորհուրդների յենթագրվող  
համազումը կատ բոլցիկյան մեծամասնությունն Այս պայմաններում բոլցի-  
վեկները վերականգնած՝ «ամբողջ թշնանությունը Խորհուրդներին» լոգունդը  
առակտիկական գիծ եւ՝ ուղղված հատկապես դեպի պրոլետարիատի և «ամե-  
նաչքավոր գյուղացիության» դիկտատուրան: Ճիշտ ե, Խորհուրդները ասելով  
հասկացվում են նաև Գյուղացիական պատգամավորների խորհուրդները, և այդ-  
պիսով բոլցիկյան լոգունդը յենթագրում ե մի իշխանություն, վոք հենված  
լինելու Ռուսաստանի ամբողջ գեմոկատիայի ճնշող մասի վրա: Բայց այդ  
գեպքում՝ «ամբողջ իշխանությունը Խորհուրդներին» լոգունդը վրկվում ե ինք-  
նուրույն նշանակությունից գործիքան Խորհուրդները դարձնում ե Խորհր-  
դակցության կողմից կազմվող «սախալարալամենտին» նույնաշանակ՝ իր կազ-  
մով... («Հոգայ Հովու»-ի այս պնդումն ամենաամոթ սուտն ե՝ համասար

այնպիսի հայտաբարության, թե դեմոկրատիզմի կեղծումն ու կեղծարքը «հա-  
մարյա նույնաշանակ» են դեմոկրատիզմի հետ, նախապարամենաց կեղծարք  
ե, վոր ժողովրդի փոքրամասնության կամքը,—մանավանդ Կուսկովայի, թիր-  
կենեկմի, Չայկովսկիների և Ընկ. կամքը, — ներկայացնում ե վորպես միծա-  
մանության կամք: Այս առաջին Յերկրորդ նույնիսկ Ավրօնեալյենելիների և Զայ-  
կովսկիների կեղծած ֆյուղացիական խորհուրդները ալին Խորհրդակցության  
մեջ կոալիցիայի հակառակորդների այնպիսի բարձր տոկոս, վոր Բանվորների  
և զինվորների պատգամավորների խորհուրդների հետ միասին կստացվի կոա-  
լիցիայի անծերեականի կործանում: Յել յերրորդ՝ «Ելիանությունը Խորհրդակ-  
ցիան» նշանակում ե, վոր Ֆյուղացիական խորհուրդների իշխանությունը լորինը  
կարածած վերակրությունը միայն գյուղացիներ ամսաշալում այուղ-  
դացնելու պատասխանատու մասին գովազդը...):

«Եթե այս յերկուսը միենայն բանն են, ապա բոլցիկյան լոգունդը  
հարկավոր ե անմիջապես հերթից հանել Խոկ յեթի «իշխանությունը Խոր-  
հրդակցիներին» լոգունդը միայն քողարկում ե պըութեարիատի դիկտատուրան,  
ապա այդպիսի իշխանությունը հենց նշանակում է հեղտփոխության անհաջո-  
ղություն և կործանում:

Հարկ կմ արդյոք ապացուցելու, վոր պըութեարիատը, մեկուսացած վոչ  
միայն յերկրի մյուս դասակարգերից, այլև դեմոկրատիայի խական կենդանի  
ուժերից, չի կարողանա վոչ տեխնիկապես տիբապետել պետական ապարատին  
և այն շարժողության մեջ դնել բացառիկ բարդ պայմաններում, վոչ ել քաղա-  
քականապես ընդունակ կլինի գիմազրավել թշնամական ուժերի այն ամբողջ  
ձնշմանը, վորը յերկրի յերեսից կարքի վոչ միայն պըութեարիատի դիկտատու-  
րան, այլև դրան ամելացրած ամբողջ հեղափոխությունը:

Մոմենտի պահանջներին համապատասխանող միակ իշխանություն հան-  
դիսանում ե այժմ իսկապես ազնիվ կոալիցիան զեմոկրատիայի ներսում...»

\* \* \*

Ներողություն ենք խնդրում մեր ընթերցողներից յերկար  
մեջքերումների համար, բայց գրանք անպայման անհամենշտ ելին: Անհրաժեշտ եր ձգդրությամբ ներկայացնել բոլցիկյաներին  
թշնամի դանապան կուսակցությունների դիրքը: Անհրաժեշտ եր  
ձգտիվ ապացուցել մի խիստ կարևոր հանգամանք, վոր բոլց այդ  
կուսակցությունները ճանաչել են վոչ միայն միանգամայն իրա-  
կան, այլև ակտուալ հրատապ հարց միայն բոլցիկյաների կողմից  
ամբողջ իշխանությունը վերցնելու հարցը:

Այժմ անցնենք այն փաստարկումների քննության, վորոնց

հիման վրա «բոլորը», կադետներից մինչև նովոժիղնականները, համազված են, վոր բոլշևիկներն իշխանությունը չպետք եւ կորողանան իրենց ձեռքին պահել:

Սովոր «Речь»-ը բացարձակապես վոչ մի փաստարկում չը բերում: Նա միայն ամենաընտեր և ամենազաղաղած հայհոյանքի հեղեղ եթափում բոլշևիկների գլխին: Մեր բերած ցիտարը ցույց եւ տալիս, իմի՞ն այլոց, վորքան խորը սխալ կլիներ կարծեր թե իրը «Речь»-ը «պրովոկացիա յե անում», վորպեսզի բոլշևիկներին իշխանությունը վերցնել տա, ուստի և «զգուշացէք, ուրեմն, ընկերներ, վորովհետև այն, ինչ վոր թշնամին և խորհուրդ տալիս, յերեկ վատ բան ե»: Յեթե մենք թե ընդհանուր, թե կոնկրետ բնույթ ունեցող նկատառությունը դորձնականորեն հաշվի առնելու փոխարեն, թույլ տանք, վոր «համոդին» մեղ նրանում, թե բուրժուազիան «պրովոկացիա յե անում» մեղ իշխանությունը վերցնել տալու համար, ապա բուրժուազիան մեղ հիմարացրած կլինի, վորովհետև, հավաստապես, նա միշտ չարխինդացությամբ կզուշակի միլիոնափոր աղետներ, վորոնք կտուշանան բոլշևիկների կողմից իշխանությունը վերցնելուց, միշտ չարությամբ կզուչի՝ «Ամենից լավ կլիներ մեկն և «յերկար տարիներով» աղտավել բոլշևիկներից, յեթե թույլ տանք նրանց իշխանության հասնել և ապա գլխովին ջախջախնեք «նրանց»: Այսպիսի կանչերը—նույնպես «պրովոկացիա յեն», յեթե կուզեք, միշտ հակառակ կողմից: Կադետներն ու բուրժուաները բնավ «խորհուրդ չեն տալիս» և յերեք «խորհուրդ չեն տվել» մեղ իշխանությունը մեր ձեռքը վերցներ — նրանք միայն փորձում են վախեցնել մեղ իշխանության իբր թե անլուծելի ինդիրներով:

Վո՛չ: Մենք չպետք ե թույլ տանք վախեցնել մեղ վախվորած բուրժուաների կանչերով: Մենք պետք ե հաստատապես հիշենք, վոր «անլուծելի» հաստարակական խնդիրներ մենք մեղ յերեք չենք առաջարկեր իսկ գեպի սոցիալիզմ անմիջապես անելիք քայլերի միանգամայն լուծելի խնդիրները, վորպես միակ յելք ստեղծված շատ դժվար դրությունից, կլուծի միայն պրոլետարիատի և ամենաչքավոր զյուղացիության դիկտատուրան Հաղթանակը և հաստատուն հաղթանակը, ավելի քան յերեւեն, ավելի

քան վորկեն ուրիշ տեղ, ապահովված ե այժմ ալրուետարիատին Ռուսաստանում, յեթե նա իշխանությունն իր ձեռքը վերցնի:

Զուտ գործնական կերպով քննության առնենք այս կամ այն առանձին մուհնուն աննպաստ դարձնող կոնկրետ պայմանները, բայց թույլ չտանք վախեցնել մեղ բուրժուազիայի վայրենի աղաղակներով ու չմոռանանք, վոր ամբողջ իշխանությունը բոլշևիկների կողմից վերցնելու հարցը դառնում և իսկապես նրանապատճեն: Այժմ անչափելիորեն ավելի մեծ վտանգ ե սպառնում: մեր կուսակցությանն, այնդիպքում, յերբ մենք մտանանք այդ, քան այն գեպում, յեթե մենք իշխանությունը վերցնելը ճանաչնենք «վաղաժամ»: Այս տեսակետից վաղաժամ վոչինչ չի կարող լինել. հոգուտ այս բանի յեն խոսում միլիոն շանսերից բոլորը, բացի, թերևս, մեկյերկուսից:

«Речь»-ի չարասիրտ հայհոյանքի առթիվ կարելի յե և հարկավոր ե կրկնել:

Мы слышим звуки одобренья

Не в сладком рокоте хвалы,

А в диких криках озлобленья!\*

Վոր բուրժուազիան մեղ այդքան վայրագ ձեռվ և ատում, այդ ամենասակնառու պարզաբանություններից մեկն և այն ձըշմարտության, վոր մենք նիշը ենք մատնանշում ժողովրդին բուրժուազիայի տիրապետության տապալման ուղիներն ու միջոցները:

\* \*

«Дело Народа»-ն այս անգամ, իբրև հաղվաղեալ բացառություն, չբարեհաճնեց պատիվ անել մեղ իր հայհոյանքով, բայց և փաստարկման ստվեր անգամ չըերեց, նա միայն անուղղակի ձեռվով, ակնարկով փորձում և վախեցնել մեղ՝ «բոլշևիկները պարտապոր կլինեն կարինետ կազմելու» հեռանկարով: Միանգամայն

\* «Մենք հավանության ձայներ ենք լուսմ վոչ թե գովեստի քաղցր շայունի, այլ չարության վայրենի ճիշերի մեջ»: — Հատվածը բերած և Դոդոյի մահվան առթիվ նեկրասովի գրած բանաստեղծությունից (ան՝ նեկրասովի բանաստ. ժող., ՌՍՖՌՀ Պետրասի հրատ., 1928 թ.), ԽՄԲ:

հավանական եմ համարում, վոր, վախեցնելով մեզ, եսերներն իրենք ամենատանկեղծ կերպով վախեցած են, մահու չափ վախեցած՝ վախվորած լիբերալի ուրվականից: Հավասարապես հնարավոր եմ համարում, վոր ևսերներին հաջողվոր ե ինչ-վոր առանձնապես բարձր և առանձնապես նեխած հաստատություններում, կենտգործկոմի և նրա նման «կոնտակտի» (այսինքն կաղետների հետ շփվող, պարզ արտահայտած՝ կաղետների հետ բարեկամություն անող) հանձնաժողովներում վախեցնել բոլցեկիներից վորմանց, վորովհետեւ, նախ և առաջ, բոլոր կենտգործկոմներում, օնախապարլամենտում» և այլ հաստատություններում տիրում ենողկալի, սիրո խառնելու չափ բորբոսած մթնոլորտ և յերկար ժամանակ այդ որը շնչելն ամեն մարդու համար վնասակար է, իսկ, յերկրորդ՝ անկեղծությունը վարակիչ է, և անկեղծորեն վախեցած ֆիլիստերն ընդունակ ենույնիսկ առանձին հեղափոխականին ժամանակավորապես ֆիլիստերի վերածել:

Բայց ինչքան ել վոր հասկանալի լինի, «մարդկայնորեն» դատելով, եսերի այդ անկեղծ վախը, — եսերի, վորը դժբախտություն ունի լինել մինփստր՝ կագետների հետ կամ լինել մինիստերիաբեր դրության մեջ՝ կադետների առաջ, այնուամենայնիվ թույլ առավ վոր քեզ վախեցնեն — նշանակում ե գործել քաղաքական սխալ, վորը շատ հեշտությամբ կարող ե սահմանակցել պրոլետարիատին դավաճանելուն: Տվեք ձեր գործնական պատճառարանությունները, պարունայք: Զուսաք, թե մենք թույլ կտանք, վոր վախեցնեք մեզ ձեր վախեցած լինելով:

\* \* \*

Գործնական փաստարկությունը այս անգամ մենք գտնում ենք միայն «Հովայ Շիզեն»-ում: Նա այս անգամ հրապարակ է գալիս բուրժուազիայի փաստաբանի իրեն ավելի սաղական դերում, քանամեն կողմով հաճելի այդ տիկնոջն ակնհայտ կերպով շահաձություն պատճառող՝ բոլցեկիների պաշտպանի դերն է:

Փաստաբանն առաջ ե բերում վեց փաստարկում.

1) պրոլետարիատը «մեկուսացած ե յերկրի մյուս դասակարգերից».

2) նա «մեկուսացած ե դեմոկրատիայի իսկական կենդանի ուժերից».

3) նա «չի կարող տեխնիկապես տիրապետել պետական աղաքատին».

4) նա «չի կարող շարժողություն մեջ դնել» այդ ապարատը.

5) «իրադրությունը բացառիկ կերպով բարդ ե».

6) նա «ըստունակ չի լինի դիմագրավել թշնամական ուժերի այն ամբողջ հարձակմանը, վորը կարբի յերկրի յերեսից վոչ միայն պրոլետարիատի դիմատուրան, այլև դրան ավելացրած՝ ամբողջ հեղափոխությունը»:

Փաստարկում առաջին «Հովայ Շիզեն»-ի կողմից շարադրված ե ծիծաղելի լինելու չափ անշնորհք կերպով, վորովհետև կապիտալիստական և կիսակապիտական հասարակության մեջ մենք պիտենք միայն յերեք դասակարգ՝ բուրժուազիան, մանր բուրժուագիան (գյուղացիությունը, վորպես նրա գլխավոր ներկայացուցիչ) և պրոլետարիատը: Ել ինչ միտք ունի խոսել մնացած դասակարգերից պրոլետարիատի մեկուսացած լինելու մասին, յերբ իսուքը վերաբերում ե պրոլետարիատի պայքարին բուրժուազիայի գեմ, հեղափոխությանը՝ ընդգեմ՝ բուրժուազիայի:

Յերեւի «Հովայ Շիզեն»-ը կամեցիկ ե ասել, վոր պրոլետարիատը մեկուսացած ե գյուղացիությունից, վորովհետև իսկապես նո չեր կարող խոսքը այստեղ վերաբերվել կալվածատերերին: Բայց ծշտիվ, պարզ կերպով ասել թե պրոլետարիատը մեկուսացած ե այժմ գյուղացիությունից, չեր կարելի, վորովհետև այդուսի պնդման աղաղակող անձշտությունն աչքի յե զարնում:

Դժվար ե պատկերացնել, վոր կապիտալիստական յերկրում պրոլետարիատն այնքան քիչ մեկուսացած լինի մանր բուրժուազիայից՝ նկատեցեք՝ բուրժուազիայի դեմ բարձրացրած հեղափոխության ընթացքում, վորքան այժմ պրոլետարիատը մոռւսաստանում: Ոյքեկան և անվիճելի տվյալներից մենք նորագույն տվյալներ՝ բուրժուազիայի հետ կոալիցիա կընքելու առթիվ Ծերեթելու «Բուլիգինյան Դումայի», այսինքն տընրահոչակ «Դիմոկրատական» խորհրդակցության «կուրիաներով»

կատարված թեր և դեմ քվեարկության վերաբերյալ՝ վերցնենք  
Խորհուրդների կուրիսաները: Ստանում ենք.

	Կոռալիցիայի կողմը	Կոռալիցիայի դեմ
Բանվորների և զինվորների պատգամ, խորհուրդներ	83	192
Դյուլացիների պատգամավորների խորհուրդներ . . .	102	70
Բոլոր Խորհուրդները . . .	185	262

Այսպիսով մեծամասնությունն ամբողջությամբ առած պրո-  
լիտարական լողունգի կողմն ե, բուրժուազիայի հետ կոռալիցիա  
կնքելու դեմ: Յեվ մենք վերը տեսանք, վոր նույնիսկ կադեաները  
հարկադրված են ընդունել բոլշևիկների ազդեցության ուժեղա-  
նալը Խորհուրդներում: Մինչես այստեղ խօսքը վերաբերում է  
այն Խորհուրդներում, վորը հրավիրված է Խորհուրդների յե-  
րեկվա առաջնորդներ և մենչևիկների: Կողմից, վորոնք  
ապահովված մեծամասնություն ունեն կենարոնական հաստատու-  
թյուններում: Ակնհայտ ե, վոր բոլշևիկների իրական գերակը-  
ռությունը Խորհուրդներում այստեղ նվազեցրած ե:

Յեվ բուրժուազիայի հետ կոռալիցիա կնքելու հարցում, և  
անմիջապես կալվածատիրական հողը գյուղացիական կոմիտենե-  
րին հանձնելու հարցում բոլշևիկներն արդեն այժմ ել իրենց կողմը  
մեծամասնություն ունեն Բանվորների, զինվորների և գյուղացինե-  
րի պատգամավորների խորհուրդներում, ունեն ծոլովրդի մե-  
ծամասնություն, մանր բուրժուազիայի մեծամասնություն: «Ра-  
бочий Путешествует в Китай и Китайскую республику» (24)-ի իր 19-րդ  
№-ում բերում ե եսերների որգան «Знамя Труда»-ի 25-րդ  
№-ից տեղեկություններ հոկտեմբերի 1 (սեպտեմբերի 18)-ին Պե-  
տերում տեղի ունեցած Գյուղացիների պատգամավորների տե-  
ղական խորհուրդների խորհրդակցության մասին: Այդ խորհր-  
դակցության մեջ անսահմանափակ կոռալիցիայի կողմն արտահայ-  
ւեցին 4 գյուղացիական Խորհուրդների (Կոստրոմայի, Սոսկվայի,  
Սամարայի և Տավրիկյան նահանգների) Գործադիր կոմիտեները:  
Առանց կադեաների մասնակցության կոռալիցիա կնքելու կողմն  
արտահայտվեցին յերեք նահանգների (Վլադիմիրի, Ռյազանի և  
Չերնոմորյան նահ.) և յերկու զորաբանակների Գործադիր կո-

միտեները: Կոռալիցիայի դեմ արտահայտվեցին խանյերեվ նահանգ-  
ների և չորս զորաբանակների Գործադիր կոմիտեները:

Այսպես ուշեմն, գյուղացիների մեծամասնությունը կոռալիցիա-  
յի դեմ է:

Այս ել ձեղ «պրոլետարիատի միկուսացած դրություն»:

Իմիջի այլոց, հարկավոր և նշելով կոռալիցիայի կողմն  
արտահայտվեցին յերեք ծայրամասային նահանգներ—Սամարայի,  
Տավրիկյան և Չերնոմորյան նահանգները, վորտեղ համեմատա-  
բար ավելի շատ կան վարձու բանվոր աշխատեցնող հարուստ  
գյուղացիներ, խոշոր կալվածատիրեր,—ինչպես և չորս արդյու-  
նաբերական նահանգները (Վլադիմիրի, Ռյազանի, Կոստրոմայի  
և Մոսկվայի), վորտեղ գյուղացիական բուժուազիան նույնպես  
ավելի ուժեղ ե, քան Ռուսաստանի նահանգների մեծ մասում:  
Հետաքրքրական կիրներ հավաքել այս հարցի վերաբերյալ ավե-  
լի մանրամասն տվյալներ և տեսնել՝ չկմն արդյոք տեղեկություն-  
ներ տանենց ավելի հարցուս գյուղացիկություն ունեցող նա-  
հանգների հատկապես ամենաշխավոր գյուղացիների մասին:

Հետաքրքրական և այնուհետև, վոր տաղգային խմբակները՝  
ավին շատ նշանակելի գերակշռություն կոռալիցիայի հակառա-  
կրդներին, այն և՝ 40 ձայն ընդդեմ 15-ի: Բոնապարտիստ կե-  
րենսկու և իր ընկերների անսեռսիոնիստական, կոպիտ բանա-  
կարական քաղաքականությունը Ռուսաստանի թերիբազ ազգու-  
թյունների նկատմամբ տվեց իր արդյունքը ձնչված ազգու-  
թյունների լայն մասսան, այսինքն նրանց մանր-բուրժուական  
մասսան, Ռուսաստանի պերուարիատին ավելի յե վստահում,  
քան բուրժուազիային, վորովհետև պատմությունն այստեղ հեր-  
թի յե զբել ճնշված ազգությունների պայքարն ազատության  
համար՝ ընդդեմ ճնշողների: Բուրժուազիան ստորությամբ գավա-  
ճանեց ճնշված ազգությունների պատության գործին, պրոլե-  
տարիատը հավատարիմ ե ազգատության գործին:

Աղքային և ազգաբային հարցերը—զրանք ներկայումս որ-  
պա արմատական հարցեր են Ռուսաստանի ընակչության մանր-  
բուրժուազիան մասսաների համար: Այս անվիճելի յիւ Յեվ այս  
յերկու հարցերում ել պրոլետարիատը և մեկուսացած չե՞ հազվա-

դեպորեն: Նրա կողմն և ժողովրդի մհծամասնությունը: Նա միակը ե, զարն ընդունածկ և վարելու այդպիսի վճռական, իրոք ռենդափոխական-դեմոկրատական» քաղաքականություն այդ յերկու հարցի նկատմամբ, վորպիսի քաղաքականությունը մեկեն կապահովմբ պրոլետարական պետական իշխանությանը վոչ միայն բնակչության մեծամասնության աջակցությունը, այլև հեղափոխական խանդավառության իսկական պոռթկում մասսաներում, վորովհետև մասսաներն առաջին անգամ կհանդիպելին կառավարության կողմից վոչ թե գյուղացիների անհնա ճնշման՝ կարվածատերերի ճեռքով, ուկրայինացիների ճնշման՝ վելիկոռուսների ճեռքով, ինչպես ցարիկմի ժամանակ եր, վոչ թե շքեղ ֆուազներով քողարկված ձգուման՝ շարունակելու նույն այդ տեսակ քաղաքականություն հանրապետության որով, կհանդիպելին վոչ թե բծախնդիք վերաբերմունքի, վերավորանքների, բանսարկությունների, ձգձգումների, վունձգությունների, խորամանկության (այն ամենին, ինչով պարզեատրում ե Կերենսկին գյուղացիներն և ճնշված աղդերին), այլ ջերմ համակրանքի, վորը գործով և ապացուցվում, անհապաղ և հեղափոխական միջոցների՝ կարվածատերերի դեմ, լրակատար ազատության անհապաղ վերականգնման ֆինլանդիայի, Ուկրայինացի, Բելոռուսիայի համար, մռւռումաների համար և այլն:

Պարօնայք եսերներն ու մենշևիկներն սքանչելիորեն գիտեն այդ և այդ պատճառով քաշ են տալիս իրենց հետեւից կոռպերատորների կիսակաղետական վերնաշերտերը՝ ոգնելու իրենց ունտեղին-դեմոկրատիկ քաղաքականությանը մասսաների դեմ: Այս իսկ պատճառով նրանք յերբեք չեն համարձակվի հարցնել մասսայի կարծիքը, կազմակերպել ռեֆերենցում կամ թեկուզ քվեարկություն՝ բոլոր տեղական Խորհուրդներում, բոլոր տեղական կազմակերպությունների մեջ՝ գործնական քաղաքականության վորոշ կետերի վերաբերյալ, որինակ՝ հարկավոր և արդյոք իսկույն նեթ հանձնել բոլոր կալվածատիրական հողերը գյուղացիական կոմիտեներին, հարկավոր և արդյոք բավարարել ֆինների կամ ուկրայինացիների այս-ինչ պահանջները և այլն:

Հապա հաշտության հարցը, ամբողջ արդի կյանքի այդ կարդի նաև հարցը: Պրոլետարիատը «մեկուսացած և մնացած գասակարգե-

րից»... Պրոլետարիատը հրապարակ ե գալիս այսուեղ իսկապես կորպիս ամբողջ ազգի ներկայացուցիչ, վորպիս ներկայացուցիչն այն ամենի, ինչ վոր կենդանի յի և ազնիվ բոլոր դասակարգերի մեջ, վորպիս ներկայացուցիչ մանր բուրժուազիայի հսկայական մհծամասնության, վորովհետև միայն պրոլետարիատն ե, վոր իշխանություն ձեռքբերով, մեկն արդարացի հաշտություն կառաջարկածի միայն պրոլետարիատը կղիմի իսկապես նեղափական միջացների (գաղտնի պայմանագրերի հրապարակում և այլն)՝ կարելույն չափ շուտ, կարելույն չափ արդարացի հաշտություն ձեռք բերելու համար: Վոչ: «Հովայ Ջիզի»-ի պարոնները, վորոնք նղաղակում են պրոլետարիատի մեկուսացած լինելու մասին, դրանով արտահայտում են միայն իրենց սուբյեկտիվ վախը բուրժուազիայից: Դորձերի որյեկտիվ գրությունը Ռուսաստանում, անկանկած, այնպիս և, վոր պրոլետարիատը նենց այժմ «մեկուսացած» չե մանր բուրժուազիայի մեծամասնությունից: Հենց այժմ, Շկուլիցիայի» տիուր փորձից հետո, պրոլետարիատն իր կողմն ունի ժողովրդի մեծամասնության համակրանքը: Բոլշևիկների կողմից իշխանությունն իրենց ձեռքին պահելու այս պայմանն առկա լի:

\*  
\* \*

Փաստարկում յերկրորդը կայանում ե նրանում, վոր իրը թե պրոլետարիատը «մեկուսացած և դեմոկրատիայի իսկական կենդանի ուժերից»: Թե այս ինչ և նշանակում, հասկանալ ան կարելի յեւ Սա, յերեկի, Շհունքերեն են, ինչպես ասում են այս պիսի գեղքերում քրանսացիները:

«Հովայ Ջիզի»-ի գրոները—մինիստերիարել մարդիկ են Նրանք մինիստր լինելու միանդամայն պիտանի կլինեյին կագեսների որով: Վորովհետև այգախիսի մինիստրներից պահանջվում ե հատկապես կարողանալ ասել վայելչատես և վայելչորեն սղալոծ փուղներ, վորոնց մեջ չկա ուղղակի վոչ մի իմաստ, վորոնցով կարելի յի քողարկել ամեն մի գարշելիություն և վորոնց համար այդ պատճառով աղանդված են իմպերիալիստների և սոցիալ-իմպերիալիստների ծափերը: Կադետների, Բրեշլովսկայայի, Պետիանովի և իրենց ընկերների ծափերն ապահովված են նովո-

ժիղնականների այն պնդման համար, վոր պրոլետարիատը մեկուսացած ե դեմոկրատիայի իսկական կենդանի ուժերից, վորովհետև անուղղակի կերպով այդտեղ ասված ե—կամ այս պընդումն այնպես կհասկացվի, ինչպես յեթե ասված լիներ,—թե էադատները, Բրեշլովկայան, Պլեխանովը, Կերենսկին և Ընկ. «Դեմոկրատիայի կենդանի ուժերն են»:

Այդ ձիշտ չեւ Թրանք մեռած ուժեր են: Այդ ապացուցել ե կոալիցիայի պատմությունը:

Նովոդեզնականները, վորոնց վախեցրել ե բուրժուազիան և բուրժուական-ինտելիգենտական միջավայրը, «կենդանի» յեն ճանաչում եսերների և մենշեկիների աջ թեր, վորը կադրաներից վոչ մի եյտական բանով չի տարրերփում, ինչպիսին ե «ՅՈԼՅԱ Հարօան, «ԵДԻՆСТВО»»-ն և այլն: Իսկ մենք կենդանի յենք համարում միայն այն, վորը կապված ե մասսաների և վոչ թե, կուլակների հետ, միայն այն, վորին կոալիցիայի դասերը վանել են կոալիցիայից: Մանր-բուրժուական դեմոկրատիայի «գործունյա կենդանի ուժերը» ներկայացված են հանձին եսերների և մենշեկիների: Ճախթեիս: Այդ ձախ թեր ուժեղացումը, մանավանդ հուլիսյան հականելափոխությունից հետո, ամենավստահելի որյեկտիվ նշաններց մեկն և այն բանի, վոր պրոլետարիատը մեկուսացած չե:

Ավելի առարկայորեն ցույց են տալիս այդ բանն եսեր ցենտրովիկների (կենտրոնականների) տատանումները գեպի ձախ՝ ամենավերջին ժամանակներս, վորոնց ապացույց և հանդիսանում Զերնովի հոկտեմբերի 7 (սեպտեմբերի 24)-ի հայտարարությունն այն մասին, թե նրա խմբակը չի կարող պաշտպանել նոր կոալիցիան Կիշկինի և Ընկ. հետո եսերների կուսակցության ներկայացուցիչների ճնշող մեծամասնությունը մինչև այսոր տվել ե այդ կուսակցության կենտրոնը: այդ կուսակցությունը գլխավորող և գերիշխող և յեղել՝ քաղաքում ու մասնավանդ զուգում իր հավաքած ձայների թվով: Այդ կուսակցության կենտրոնի տատանումները գեպի ձախ ապացույցում են, վոր «Դելօ Հարօան»-ի վերը բերած հայտարարություններն այն մասին, թե դեմոկրատիան, վորոշ պայմաններում, անհրաժեշտաբար պետք ե «ապահովի լիակատար աջակցություն» դուռը-բոլ-

շեմական կառավարությանը՝ համենայն դեսպ միայն ֆուղներ չեն:

Այնպիսի փաստեր, վորպիսին ե այն, թե եսերական կենտրոնը հրաժարվում է պաշտպանելուց նոր կոալիցիան Կիշկինի հետ, կամ այն, թե կոալիցիայի հակառակորդները գերակշռում են գավառական մենակի-պատասխանողականների մեջ (Ժորդանիան Կովկասում և այլն)—որյեկտիվ ապացույցներ են, վոր մինչև այժմ մենակիների ու եսերների հետեւ գնացող մասսաների մի վորոշ մասը կապատասխանի դուռ բոլցեկիկան կառավարությունը:

Հենց գեմոկրատիայի կենդանի ուժերից ե, վոր այժմ չի մեկուսացած Ռուսաստանի պրոլետարիատը:

\* \*

36264

Փաստաբկում յերրորդ. պրոլետարիատը «չի կարողանա տեխնիկավես տիրապետել պետական ապարատին»: Սա, թերեւս, ամենասովորական, ամենատարածված փաստարկումն ե: Սա ամենամեծ ուշադրության ե արժանի ինչպես այս պատճեռով, այնպիս ել նրա համար, վոր մատնացույց և անում հաղթական պրոլետարիատի առաջ կանգնած ամենա-լուրջ, ամենադժվարին խնդիրներից մեկը: Կասկած չկա, վոր այդ խնդիրները շատ դժվար խնդիրներ են, բայց յեթե մենք, մեզ սոցիալիստ անվանելով, մատնանշենք այդ դժվարությունները միայն նրա համար, վորպեսզի զլուխներս ազտանիք այդպիսի խնդիրներն իրականացնելուց, ապա գործնականում մեր տարրերությունը բաւրժուագիայի ծառաներից կհավասարվի զերոյի: Պրոլետարական հեղափոխության խնդիրների դժվարությունը պետք ե դրդի պրոլետարիատի կողմանակիցներին ավելի ուշադիր և կրնկրեալ կերպով ուսումնակիրել այդ խնդիրների իրականացման յեղանակները:

Պետական ապարատ ասելով ամենից առաջ հասկացվում է մշտական բանակը, վոստիկանությունը և պաշտոնելությունը: Խոսելով այն մասին, վոր պրոլետարիատը չի կարողանա տեխնիկավես տիրապետել այդ ապարատին, «Հովայ ՀԱՅԱՍՏԱՆ»-ի գրողները հանդես են բերում ամենածայրահեղ տգիտություն և այն, վոր չեն ցանկանում վհչ հաշվի տունել կյանքի փաստերը,



վո՞չ ել գաղուց բոլշևիկյան գրականության մեջ նշված նկատառությունը:

«Новая Жизнь»-ի գրողները բոլորն ել համարում են իրենց յեթե վոչ մարքսիստներ, զոնե մարքսիզմին ծանոթ մարդիկ, կրթված սոցիալիստներ: Իսկ Մարքսը Փարիզի կոմունայի փորձի հիման վրա սովորեցրել ե, վոր պրոլետարիատը չի կարող ուղղակի տիրապետել պատրաստի պետական մեքենային և դործի գցել այն իր նպատակների համար, վոր պրոլետարիատը պետք ե զարդի այդ մեքենան և փոխարինի այն նորով (այս մասին ավելի մանրամասն յես խոսել եմ մի բրոցուրում, վորի առաջին պրակըն ավարտված և և շուտով լույս ե տեսնելու այսպիսի վերնադուվ՝ «Պետություն և հեղափոխություն: Մարքսիզմի ուսմունքը պետության մասին և պրոլետարիատի խորիները հեղափոխության մեջ»)\*: Այդ նոր պետական մեքենան ստեղծեց Փարիզի կոմունան, և նույն այդ ժիվի «պետական ապարատ» են հանդիսանում Բանվորների, Զինվորների և Գյուղացիների պատգամավորների ուսուական և առաջնարդները: Այս հանգամանքը յես շատ անդամ եմ մատնաշել, սկսած 1917 թ. ապրիլի 17 (4)-ից այդ մասին խոսվում ե բոլշևիկյան կոնֆերենցիաների բանաձևներում, ինչպես և բոլշևիկյան գրականության մեջ: «Новая Жизнь»-ը, իհարկե, կարող եր հայտարարել նաև իր կատարյալ անհամաձայնությունը թե Մարքսի, և թե՛ բոլշևիկների հետ, բայց բոլորին խուսափել այդ հարցից մի լրազրի համար, վորն այնպիս հաճախ և այնպիսի գոռողությամբ և հայնոյում բոլշևիկներին նրանց, իրը թե, վոչ լուրջ վերաբերունքի համար դեպի դժվարին հարցերը՝ կնշանակի տալ իրեն աղքատության վկայական:

«Տիրապետել» «պետական ապարատին» և «շարժողության մեջ դնել այն» պրոլետարիատը չի կարող: Բայց նա կարող է զարդել այն ամենն, ինչ վոր ճնշողական, ուստինային, անուղղաբուրժուական և հին պետական ապարատում, զնելով նրա տեղը իր, նոր ապարատը: Հենց այդ ապարատն են հանդիսանում Բանվորների, Զինվորների և Գյուղացիների պատգամավորների նորությունները:

\* Տես Վ. Ի. Ղենլին, Յերկեր, հ. XXI, եջ 365—455: Խոմք.:

Զի կարելի ուղղակի հրեշավոր անուն չտալ այն բանին, վոր «Новая Жизнь»-ը այդ «պետական ապարատի» մասին բուլորովին մոռացել ե: Այդպես վարվելով իրենց թեորիական գատողությունների ժամանակ, նովոժիզնականներն եյալես քաղաքական թեորիայի տապարեզում անում են այն, ինչ վոր կաղետներն անում են քաղաքական պրակտիկայում: Վորովհետեւ յեթի իրոք պրոլետարիատին և հեղափոխական գեմոկրատիային վոչ մի նոր ապարատ նարկավոր չե, այդ գեղքում նորհուրդները կորցնում են իրենց raison d'être-ը\*: և կորցնում են իրենց գոյության իրավունքը, այդ գեղքում իրավացի յեն կաղետ-կորնիլովյաններն իրենց ձգտումով՝ վոչնչի հավասարեցնել նորհուրդները:

«Новая Жизнь»-ի այդ հրեշավոր թեորիական սխալը և քաղաքական կուրությունն այնքան հրեշավոր ե, վոր նույնիսկ մենաշեիկ ինտերնացիոնալիստները (վորոնց հետ «Новая Жизнь»-ը բլոկ ուներ կազմած Պիտերի Քաղաքային Դումայի վերջին ընտրությունների ժամանակ) հայտաբերեցին այդ հարցում վորոշ մերձեցում գեպի բոլշևիկները: Այսպես, որինակ՝ խորհրդային մեծամասնության այն դեկլարացիայում, վոր հրապարակեց ընկեր Մարտովը Դեմոկրատական խորհրդակցության նիստում, մենք կարդում ենք.

... Բանվորների, դինվորների և գյուղացիների պատգամավորների խորհրդները, ստեղծված հեղափոխության առաջին որերին իսկական ժողովրդական ստեղծագործության հզոր թափով, կազմեցին հեղափոխության պետականության այն նոր հյուսվածքը, վորը փոխարինեց հին սեմիմի պետականության հնացած հյուսվածքին...

Այս ասված և փոքր ինչ չափազանց գեղեցիկ, այսինքն արտահայտությունների սեթենթությունը քողարկում ե քաղաքական մտքի պարզության պակասությունը: Նորհուրդները կեռևի չեն փոխարինել հին «հյուսվածքը», և այդ հին «հյուսվածքը» հին սեմիմի պետականությունը չե, այլ թե ցորիզմի, թե բուրժուական հանրապետության պետականությունը: Բայց համենայն դեպք, Մարտովն այստեղ յերկու գլխով բարձր ե նովոժիզնականներից:

\* — գոյության իմաստը Խոմք.:

Խորհուրդները նոր պետական ապարատ են, վորը տալիս են, նախ՝ զինված ուժը բանվորներին և զյուղացիներին, ընդվորում այդ ուժը կարված չե ժողովրդից, ինչպես հին մշտական բանակի ուժը, այլ ամենասուրբ կերպով կապված ենք հետ ուղարկան տեսակետից այդ ուժն անհամեմատ ավելի դորեզ են, քան նախորդները, հեղափոխական տեսակետից այն չի կարող փոխարինվել ուրիշ վոչ մի բանով։ Յերկրորդ՝ այդ ապարատը տալիս ե կապ մասսաների, ժողովրդի մեծամասնության հետ՝ այնքան սերտ, անխղելի, հեշտ ստուգելի և վերանորոգելի կապ, վոր նման բանի հոտն անդամ չկար նախկին պետական ապարատում։ Յերրորդ՝ այդ ապարատը, շնորհիվ այն բանի, վոր նրա կազմն ընտրվում ե և փոխվում ժողովրդի կամքով՝ առանց բյուրոկրատիկ ձեականությունների, հանդիսանում ե շատ ավելի դիմոկրատիկ, քան նախկին ապարատները։ Չորրորդ՝ նա տալիս ե սմուր կապ ամենաբաղմաղան պրոֆեսիաների հետ, դրանով հեշտացնելով ամենախոր բնույթի ամենաբաղմապիսի ռեփորտներ մացնելու առանց ըյուռոկրատիայի։ Հինգերրորդ՝ նա տալիս ե ավանդարդի, այսինքն ճնշելած դասակարգերի, բանվորների և գյուղացիների ամենագիտակից, ամենայեռանդուն, առաջավոր մասի կաղմակերպական ձևերը, հանդիսանալով, այդպիսով, այն ապարատը, վորի միջոցով ճնշված դասակարգերի ավանդարդը կարող ե վոտքի կանգնեցնել, դաստիարակիել, կրթել և իր հետեւյց տանել այդ դասակարգերի ամբողջ նոկայական մասսան, վորը մինչև այժմ բոլորովին դուրս ե կանգնած քաղաքական կյանքից, պատմությունից։ Վեցերրորդ՝ նա հնարավերություն ե տալիս միացնելու պառամենատարիդմի առավելություններն անմիջական և ուղղակի դիմոկրատիայի առավելություններին, այս սենքն՝ ժողովրդի ընտրյալ ներկայացուցիչների մեջ միացնել թե ոբենագիր փունկցիան, թե սրբազնությունը կատարամը։ Բուրժուական պառամենատարիդմի համեմատությամբ սա այնպիսի մի քայլ ե գեպի առաջ դիմոկրատիայի զարգացման գործում, վոր ունի համաշխարհային-պատմական նշանակություն։

Մեր խորհուրդները 1905 թվին, այսպես ասած, լոկ արգանդում գտնվող սաղմ եյին, վորովհետև դոյություն ունեցան ընդունակությունը միքանի շաբաթ։ Պարզ ե, վոր այն ժամանակվա պայ-

մաններում նրանց համակողմանի դարձանալու մասին խոսք անգամ. չեր կարող լինել։ 1917 թվի հեղափոխության ընթացքում ևս գեւևս խոսք չեր կարող լինել այդ մասին, վորովհետև միթանի ամսվա ժամանակամիջոցը խիստ քիչ ե, իսկ վոր զիվարուն ե՝ եսերական և մենշենիկյան առաջնորդները պառենացնում ելին Խորհուրդներին, նրանց դերը հավասարեցնում եյին խոսարանի գերի, առաջնորդների համաձայնողական քաղաքականության հավելվածի գերի։ Խորհուրդները փուռմ և վողջ-վողջ քայլավում եյին Լիբերների, Դաների, Ծերեթելիների, Զերնովների զեկավարության տակ։ Զարգանալ ինչպես պետքն ե, լովին ծավալել իրենց ավյաներն ու ընդունակությունները Խորհուրդները կարող են միայն այն դեպքում, յեթե ամբողջ պետական իշխանությունն իրենց ձեռքը վերցնեն, վարովինետև այլ կերպ նրանք անելիք չեն ունենա, այլ կերպ նրանք կամ հասարակ սաղմեր են (իսկ խիստ յերկար ժամանակ սաղմ մնալ չի կարելի), կամ խաղալիքներ։ «Յերկիշխանությունը» Խորհուրդների կաթվածն ե։

Յեթե հեղափոխական դասակարգերի ժողովրդական ստեղծագործությունը Խորհուրդները չստեղծեր, ապա պրոլետարական հեղափոխությունը Ռուսաստանում կլիներ անհուսալի մի դորձ, վորովհետև հին ապարատն ունենալով՝ պրոլետարիատն, անկասկած, իշխանությունն իր ձեռքին պահել չպիտի կարողանար, իսկ նոր ապարատ մեկն ստեղծել չի կարելի։ Ծերեթելու և Զերնովի կողմից Խորհուրդները պոռնկացման յենթարկելու տիսուր պատմությունը, «Կոռալիցիայի» պատմությունը՝ միաժամանակ պատմությունն ե Խորհուրդների ազտափրման մանր-բուրժուական պատրանքներից, պատմությունն այն բանի, թե նրանք ինչպես անցան բոլոր և ամեն տեսակի բուրժուական կոալիցիաների ամբողջ գարշելիության և կեղակի գործնական ուսումնասիրության «քավարանքց»։ Հուսանք, վոր այդ «քավարանը» ուժասպառ չարեց Խորհուրդներին, այլ կոփեց նրանց։

\* \*

Պրոլետարական հեղափոխության առաջ կանգնած ամենաշատավոր զժվարությունը համաժողովրդական մասշտաբով ճշտա-

գույն և ամենաբարեխիղճ հաշվառում և կոնտրոլ իրականացնելն է, բանվորական կոնտրոլ արտադրության և մթերքների բաշխման նկատմամբ:

Յերբ նովոժիղնական գրողներն առարկում եյին մեզ, թե իբր մենք սինդիկալիզմի մեջ ենք ընկնում «բանվորական կոնտրոլ» լոգունդ առաջարկելով, այդ առարկությունը «մարքսիզմի» աշակերտական, հիմար գործադրման նմուշ եր, վոչ թե մտածված, այլ Ստրուկիյի յեղանակով սերտած: Սինդիկալիզմը կամ ժխտում և պրոխարիտի դիկտատուրան, կամ հատկացնում և նրան, ինչպես և առհասարակ քաղաքական իշխանությանը, ինսերորդ տեղը: Մենք դիկտատուրան դնում ենք առաջին տեղը: Յեթե խուսենք պարզապես նովոժիղնականների վորով՝ վոչ թե բանվորական կոնտրոլ, այլ պետական կոնտրոլ,—ապա ստացվում ե բուրժուական-ռեֆորմիստական ֆուազ, եյալես ստացվում ե զուտ կադետական ֆորմուրա, վորովնեակ բանվորների մասնակցությանը «պետական» կոնտրոլին կագետները գեմ չեն: Կադետ-կորնիլովյանները շատ լավ գիտեն, վոր այլպիսի մասնակցությունը բուրժուականից կողմից բանվորներին խարելու լավագույն յեղանակը ե, լավագույն յեղանակն ամեն տեսակի Գվոդոյովների, Նեկիտինների, Պրոկոպիչների, Շերեթելինների և այդ ամբողջ բանդայի նրանք կատալման՝ քաղաքական իմաստով:

Յերբ մենք ասում ենք «բանվորական կոնտրոլ», միշտ դնենով այդ լոգունդը պրոխարիտի դիկտատուրայի կողին, միշտ նրանից անմիջապես նետ, ապա մենք դրանով պարզաբանում ենք, թե ինչ պետության մասին և խոսքը: Պետությունը նույն ենք, թե ինչ պետական տիբապետության որդան ե: Վճռ դասակարգի: Յեթե դասակարգի տիբապետության-ըստրմագիտայի, ապա այդ և հենց կագետական-կորնիլովյան-կիրհնական պետականությունը, վորից բանվոր ժողովուրդը նույնատառական արդին կեստարուց ավելի յե կօրություն է կորությունը և առաջանական արդիուրդը, այդ ապարատը հարկավոր և դարձնել ավելի լայն, ավելի համայնալարփակ, ավելի համաժողովրդական: Յեկ այդ կարելի յե անել, հենվելով այն նվաճումների վրա, վոր արդեն կենսագործել և խոշորագույն կապիտալիզմը (ինչպես և առհասարակ պրոլետարական հեղափոխությունը կարող և հասնել իր նպատակին՝ միայն հենվելով այդ նվաճումների վրա):

Այս և գլխավոր դժվարությունը, այս և գլխավոր ինդիբը պրոխարական, այսինքն սոցիալական հեղափոխության: Առանց նորհուրդների այս խնդիրը, գոնե Ռուսաստանի համար, կլիներ անլուծելի: Խորհուրդներն ուրվագծում են պրոխարիտի տն կազմակերպական աշխատանքը, վորը կարող ե համաշխարհային պատմական նշանակություն ունեցող խնդիր լուծել:

Եյտեղ մենք մոտեցանք պետական ապարատի հարցի մյուս կողմին Մշտական բանակի, վլուսիկանության, պաշտոնեյության՝ զլխավորակնես «Ճնշիչ»՝ ապարատից զատ, ներկա պիտաւթյան մեջ կա ևս մի ապարատ՝ առանձնապես սերու կապված բանկերի ու սինդիկատների հետ, մի ապարատ, վորը կատարում ե ահագին, յեթե թույլատրելի յե այսպես արտահայտվել՝ հաշվառման ու գրանցման աշխատանք: Այդ ապարատը ջարդել չի կարելի և հարկավոր չե: Այդ ապարատը հարկավոր և կորզել կապիտալիստների տիբապետությունից, հարկավոր և նրանից պակել, կտրել, հատել ու դեն զցել կապիտալիստներին՝ իրենց աղդեցության թելերի հետ միասին, այդ ապարատը հարկավոր և յերշտարական նորհուրդներին, այդ ապարատը հարկավոր և դարձնել ավելի լայն, ավելի համայնալարփակ, ավելի համաժողովրդական: Յեկ այդ կարելի յե անել, հենվելով այն նվաճումների վրա, վոր արդեն կենսագործել և խոշորագույն կապիտալիզմը (ինչպես և առհասարակ պրոլետարական հեղափոխությունը կարող և հասնել իր նպատակին՝ միայն հենվելով այդ նվաճումների վրա):

Կապիտալիզմն ստեղծել և հաշվառման ապարատներ, ինչպես են, որինակ՝ բանկերը, սինդիկատները, փոստը, սպառողական ընկերությունները, ծառայողների միությունները: Առանց խուռար բանկերի սոցիալիզմն անիրազարձելի կլիներ:

Խոշոր բանկերն այն «պետական ապարատն» են, վոր մեզ հարկավոր և սոցիալիզմի իրականացման համար և վորը մենք վեցնում ենք պատրասի կերպով կապիտալիզմից, ընդուրում մեր խնդիրն այս տեղ միայն այն ե, վոր կտրենք, դեն զցենք այն, ինչը կապիտալիստանորեն այլանդակում ե այդ սքանչելի ապարատը, դարձնել այն ավելի խուռար, ավելի դեմոկրատիկ, ավելի համայնապարփակ: Քանակը կփոխվի վորակի: Միացյալ խոշորագույններից

ամենախոշորագույն պետական բանկը, իբ բաժամունքներով յուրաքանչյուր վլուստում, ամեն մի ֆաբրիկային կից—այդ արդեն ինը տասերորդականն է սոցիալիստական առարատի: Այդ—համապետական հաւելեարություն է, մթերքների արտադրության և բաշխման համապետական հաւելառում, դա սոցիալիստական հասարակության այսպես ասած կմախիքի պես մի բան է:

Այդ «պետական առարատը» (վոր լիովին պետական չե կապիտալիզմի ժամանակ, բայց վոր լիովին պետական կլինի մեղմոտ, սոցիալիզմի որով) մենք կարող ենք «վերցնել» և «շարժողության մեջ դնել» մի հարգածով, մի հրովարտակով, վորովիճետն հաշվետարության, կոնտրոլի, գրանցման, հաշվառման և հաշիվ պահելու փաստական աշխատանքն այստեղ կատարում են ծառայողները, վորոնց մեծամասնությունն ինքն ևս գտնվում ե պըուլտարական կամ կիսապրկետարական գրության մեջ:

Պրոլետարական կառավարության մի հրովարտակով այդ ծառայողների գրությունը կարելի յե և հարկավոր և փոխել և դնել նրանց պետական ծառայողների գրության մեջ—նման այն բանի, ինչպես կապիտալիզմի պահապան շները, ինչպես Բըիանը և այլ բուրժուական մինիստրները, վորոնք մի հրովարտակով գործադուլավոր յերկաթուղայիններին փոխադրում են պետական ծառայողների գրության: Այդպիսի պետական ծառայողներ մեղ կհարկավորվեն շատ ավելի մեծ թվով, և այդպիսիներ կարելի յե շատ ստանալ վորովինետե կապիտալիզմը պարզացը և հաշվառման և կոնտրոլի փունկցիաները, հասցը և այդ փունկցիաները համեմատաբար վոչ բարդ, յուրաքանչյուր զրագետ մարդու մատչելի՝ գրանցման:

Բանկային, սինդիկատային, առևտրական և այլն և այլն ծառայողների մասսայի «պետականացումը»—միանդամայն իրագործելի բան և թե տեխնիկապես (շնորհիվ այն նախնական աշխատանքի, վոր կատարել են մեղ համար կապիտալիզմը և ֆինանսական կապիտալիզմը), թե քաղաքականապես՝ Խորհուրդների կոնտրոլի և վերահսկողության գոյության գեպօւմ:

Ասկ բարձր կարգի ծառայողների հետ, վորոնք շատ փոքրթիվ են, բայց ձգտում են դեպի կապիտալիստները, հարկադրված պետք և լինենք վարդել ինչպես կապիտալիստների հետ,

այն և «խստությամբ»: Նրանք, ինչպես և կապիտալիստները, դիմագրության ցույց կտան: Այդ դիմագրությունը հարկավոր կլինի կարելի, և յեթե իր միամատությամբ տնօտան Պեշեխոնովը դեռևս 1917 թվի հունիսին թոթովում եր, վորպես իսկական ավետական մանուկ», վոր էկապիտալիստների դիմագրությունը կոտրված եր, տպա այդ յերեխայական Փռազը, մանկական պարծենկուությունը, տղայական քայլը պրոլետարիատը կիենազգածի լրջութեան:

Այդ մենք անել կարող ենք, վորովիճետ այսակե խոսքը վերաբերում ե բնակչության չնչին փոքրամասնության, տառացի առած՝ մի բուռը մարդկանց դիմագրությունը կուարելուն, իսկ դրանցից յուրաքանչյուրի նկատմամբ ծառայողների միությունները, արհեստական միությունները, սպառողական ընկերությունները և Խորհուրդները կահմանեն այնպիսի հսկողություն, վոր ամեն մի Տիտ Տիտիչ օրդապաված կլինի, ինչպես Փրանսացին Սեղանի տակ: Այդ Տիտ Տիտիչներին մենք ճանաչում ենք հականե հանգմանե. բավական և վերցնել դիրեկտորների, վարչության անդամների, խոշոր ակցիոներների և այլոց ցուցակները: Դրանք միջանի հարյուր հագի յեն—ամենաշաը միքանի հազար հոգի ամբողջ Ռուսաստանում: Դրանցից յուրաքանչյուրի վրա պրոլետարական պետությունը՝ Խորհուրդների, ծառայողների միությունների և այլ առարատ ունենալով, կարող և նշանակել և տասնյակով և հարյուրյակով վերահսկիչներ, այնպիս վոր «գիմադրությունը կուարելու» տեղ թերեւ հաջողվի բանվորական կոնյուրալի միջոցավ (կապիտալիստների նկատմամբ գործադրվող) անկարելի դարձնել վորենե դիմագրություն:

Խնդրի «մեխը» նույնիսկ կապիտալիստների գոյքը ի դրավումը չի հանդիսանա, այլ հենց համաժողովրդական, համայնապարփակ բանվորական կոնտրոլը կապիտալիստների և նրանց հնարավոր կողմանիկցների նկատմամբ: Միայն կոնֆիսկացիայով վոչինչ չես անի, վորովիճետե դրանում չկա ճիշտ բաշխման կազմակերպման, հաշվառման տարրը: Կոնֆիսկացիան մենք ոյուրությամբ կփոխարինենք արդարությունը հարկ հավաքելով (թեկուղ և «շինգարյովյան» գրույքներով)—միայն թե կարողանանք վերացնել հաշվետու լինելուց խուսափելու, ճշմարտությունը թագը ըլնելու, որինքից խուսափելու հնարավորությունը: Իսկ այդ

հնարավորությունը կվերացնի միայն բանվորական պետուրյան բանվորական կոնտրոլը:

Սիստեմական սինդիկացում, այսինքն ստիպողական միավորում միությունների մեջ պետության հսկողության տակ—ահա թե ինչ ե նախապատրաստել կապիտալիզմը, ահա թե ինչ ե իրականացրել ֆերմանիայում յունկերների պետությունը, ահա թե ինչ միանգամայն իրագործելի կլինի Ռուսաստանում Խորհուրդների համար, պրոլետարիատի դիկտատուրայի համար,—ահա թե ինչ կտա մեզ «պետական ապարատը»—վորը կլինի և՝ ունիվերսալ, և՝ նորագույն, և՝ վոչ-բյուրոկրատիկ\*:

\*\*\*

Բուրժուազիայի փաստաբանների չորրորդ փաստարկումն և պրոլետարիատը չի կարողանա շշարժման մեջ դնել պետական ապարատը Այս փաստարկումը վորեն նոր բան չի ներկայացնում՝ նախորդ փաստարկման համեմատությամբ։ Հին ապարատին մենք, ինարկե, վոչ կարող ենինք տիրել, վոչ ել շարժման մեջ դնել այն նոր ապարատը, Խորհուրդները, արդեն շարժման մեջ և դրվել «իսկական ժողովքական ստեղծագործության գորեղ թափով։ Այդ ապարատի վրայից միայն հարկավոր ե վերացնել այն օրդրաները, վոր գրել և նրա վրա հսկական և մենշևիկյան առաջնորդների գլխավորությունը։ Այդ ապարատն արդեն շարժման մեջ և, հարկավոր և միայն գուրս գցել այն այլանդակ մանրքուրժուական հավելումները, վորոնք խանդարում հն նրան առաջ ու առաջ շարժվել լիսկատար ընթացքով։

Մեր վերը աշածը լրացնելու համար հարկավոր ե այսաեղ քննարկել յերկու համգամանք. նախ և առաջ՝ կոնտրոլի այն նոր միջոցները, վոր վոչ թե մենք մենք ստեղծել, այլ կապիտալիզմի իր ստագմա-իմպերիալիստական ստագիայում. յերկրորդ՝ դիմոկրատիզմի խորացման նշանակությունը պրոլետարական տիպի պետության կառավարման գործում։

\* Ստիպողական սինդիկացման նշանակության մասին ավելի մանրամասըն տես իմ «Ապառնացող կատարերովը և ինչպես պայքարել նրա դեմքուրը (Յերկեր, հատ. XXI, էջ 174, ոռու հրատ. Խմբ.)»

Հացի մոնոպոլիան և հացի քարտերը մենք չենք ստեղծել այլ պատերազմող կապիտալիստական պետությունը։ Նա արգեն ստեղծել ե աշխատանքի ընդհանուր պարհակ կապիտալիզմի վրա նականերում, այդ զինվորական տաժանակրային բանա և բանվորների համար։ Բայց այստեղ ես, ինչպես և իր ամբողջ պատմական ստեղծագործության մեջ, պրոլետարիատն իր զենքը փոխ ե տոնում կապիտալիզմից և վոչ թե «հնարում», վոչ թե սատեղում ե վոչնչից։

Հացի մոնոպոլիան, հացի քարտը, աշխատանքի ընդհանուր պարհակը՝ պրոլետարական պետության ձեռքին, լիակատար իշխանությամբ ոժաված Խորհուրդների ձեռքին հաշվառման և կոնտրոլի ամենազորեղ միջոցն են, —այսպիսի միջոց, վորը յեթե տարածվի կապիտալիստների և հարուստների վրա ընդհանրապես, թե ինը նկատմամբ գործադրվի բանվորների կողմից, կատապամության մեջ դնենս չտեսնված ուժ՝ պետական ապարատը շշարժման մեջ դնելուն՝ կապիտալիստների դիմադրությունը հաղթահարելու, նրանց պրոլետարական պետությանը յենթարկելու համար։ Կոնտրոլի և աշխատանքի հարկադրման այս միջոցն ավելի զորեղ և, քան կոնվենտի որենքները և նրա գիլյուտինը՝ Գիլյուտինը միայն վախեցնում եր, միայն կոտրում ակտիվ դիմադրությունը։ Մեզ համար այդ քիչ ե։

Մեզ համար այդ քիչ ե։ Մեզ հարկավոր ե վոչ միայն «վախեցնել» կապիտալիստներին այն տեսակետից, վոր նրանք զգան պրոլետարական պետության ամենազոր լինելը և մոռանան նրան ակտիվ դիմադրություն ցույց տալու մասին մտածելը։ Մեզ հարկավոր ե կոտրել նաև պասիվ—անտարակույս ավելի փոանգամորու վախեցնելը լրացնելը։ Մեզ հարկավոր ե վոչ միայն կոտրել ամեն մի զիմադրություն։ Մեզ հարկավոր ե հարկադրել աշխատելու նոր կազմակերպության շրջանակներում։ Բավական չե «մեջտեղից վերացնելը կապիտալիստներին, հարկավորը և (մեջտեղից վերացնելով անպետք, անուզդա «գիմադրականներին») նրանց լծել նոր պետական ծառայության։ Այս բանը վերաբերում ե թե կապիտալիստներին, թե բուրժուական ինտեղնեցիայի, ծառայողներին և այլոց վորոշ վերին շերտին։

Յեզ մենք այդ բանն անելու միջոց ունենք։ Այս բանի համար մեր ձեռքը միջոց և զենք և տվել ինքը պատերազմող կա-

պիտակստական պետությունը։ Այդ միջացն ե՝ հացի մոնոպոլիան, հացի քարար, աշխատանքի ընդհանուր պարհակը։ «Ով չի աշխատում, նա չպետք ե ուտի»—ահա հիմնական, առաջնագույն և ամենագլուխը կանոնը, վոր կարող են կենսագործել և կկենսագործեն Բանվորների Պատգամավորական Խորհուրդները, յերբ իշխանություն կդառնան։

Աշխատանքային հաշվեգրքույլ ունի ամեն մի բանվոր։ Նրան չի նվաստացնում այդ գոկումնենուր, թեև դա այժմ, անտարակույն, հանդիսանում ե կապիտալիստական վարձկան ստրկության դռնումնուտ, վկայական այն բանի, վոր աշխատավոր մարդը պատկանում և այս կամ այն պորտաբույժին։

Խորհուրդները աշխատանքային հաշվեգրքույլ կսահմանեն հարօւտաների համար և ապա աստիճանաբար նաև ամբողջ ազգաբնակության համար (գյուղացիական յերկում, հավանաբար, գեուս յերկար ժամանակ աշխատանքային հաշվեգրքույլ հարկավոր չի լինի գյուղացիության ճնշող մեծամասնության համար)։ Աշխատանքային հաշվեգրքույլը կդադարի «սեռսկրության» նշան լինել կդադարի «ստորին» դասերի գոկումնուտ, վարձկան ստրկության վկայակագիր լինել։ Նա կվերածվի այն վկայության, վոր նոր հասարակության մեջ այլևս չկան «բանվորներ», բայց չկա և վոչ մեկը, վոր աշխատաղ չինի։

Հարուսաները պետք ե աշխատանքային հաշվեգրքույլ ստանան բանվորների կամ ծառայողների այն միությունից, վորին ամենից ավելի մոտ առնչություն ունի նրանց գործունեյության ասպարեզը, նրանք պետք ե ամեն շաբաթ, կամ վորեւ այլ վորոշ ժամանակամիջոցից հետո, ստանան այդ միությունից հավաստագրել այն մասին, վոր բարեխիղճ են կատարում իրենց աշխատանքը։ առանց զրա՞ նրանք չեն կարող ստանալ հացի քարտ և պարհավորման մթերքներ ընդհանրապես։ Մեկ պետք են բանկային գործի և ձեռնարկությունների միավորման լավ կազմակերպիչներ (այս գործում կապիտալիստներն ավելի յեն փորձառու, իսկ փորձառու մարդկանց հետ աշխատանքը հեշտ ե գնում), մեկ պետք են, առաջվա համեմատությամբ, ավելի ու ավելի մեծ թվով ինժեներներ, ազգություններ, տեխնիկներ, գիտականապես կրթված ամեն տեսակ մասնագետներ։ Մենք բոլորս այդպիսի աշխատողներին

կտանք նրանց ուժերին համապատասխան և նրանց համար սովորական աշխատանք, մենք, հավանորեն, միայն աստիճանաբար կմտցնենք աշխատավարձի հավասարությունը լիակատար չափով, անցման շրջանի համար ավելի բարձր աշխատավարձ թողնելով այդպիսի մասնագետների համար, բայց մենք նրանց կդնենք համակողմանի բանվորական կոնտրոլի տակ, մենք կհասնենք ուղղ չի աշխատում, նա չի ուտում կանոնի լիակատար և անպայման կենսագործման։ Իսկ աշխատանքի կազմակերպական ձևը մենք չենք հորինում, այլ պատրաստի ձևով վերցնում ենք կապիտալիզմից՝ բանկերը, սինդիկատները, լավագույն ֆարբիկաները, փորձնական կայանները, ակադեմիաները և այլն։ մենք պետք ե փոխ առնենք առաջադեմ յերկիրների փորձից միայն լավագույն որինակները։

Յեվ, իհարկե, մենք մաղաչափ անգամ չենք ընկնի ուտուղիդմի մեջ, մենք չենք կորցնի մեր վոտքի տակից ամենալրջմիտ գործնական հաշվարկման հողը, յեթե ասենք՝ կապիտալիստների ամբողջ դասակարգը ցույց կտա ամենահամառ դիմադրությունը, բայց ամբողջ ազգաբանկության Խորհուրդների մեջ կազմակերպումով այդ դիմադրությունը կկոտրվի, ընդվորում առանձնապես համառ ու չհնազանդվող կապիտալիստներին, հասկանալի յե, վոր հարկ կզգացվի պատժել նրանց ամբողջ գույքը գրավելով և նրանց բանտարկելով, բայց դրա փոխարեն պրոլետարիատի հաղթանակը կալեացնի թիմը այնպիսի գելքերի, վորոնց մասին յես կարդում եմ, որինակ, այսորվա «Հաւեստիա»-յում։

«Հոկտեմբերի 9 (սեպտեմբերի 26)-ին Գործարանային կոմիտեների կենտրոնական խորհուրդը յեկան յերկու ինժեներներ հայտարարելու, վոր մի խումբ ինժեներներ վորոշել են կազմի սոցիալիստ ինժեներների միություն դաշներով, վոր ներկա ժամանակը երաշես սկիզբն ե հանդիսանում սոցիալիստական հեղափոխության, միությունն իրեն դնում ե բանվորական մասսաների տրամադրության տակ և ցանկանում ե, բանվորների շահերը պաշտպանելով, գործել վականար համերաշխատությամբ բանվորական կազմակերպությունների հետ Գործարանային կոմիտեների կենտրոնական խորհրդի ներկայացները պատմանեցին, վոր Խորհուրդը հաճաւյքով կստեղծի իր կազմակերպության մեջ ինժեներների սեկցիա, վոր կմտցնի իր ծրագրի մեջ գործարանային կոմիտեների 1-ին կոնֆերենցիայի հիմնական թեզիսները՝ արտադրության վրա բանվորական կոնտրոլ հարստացելու մասին Մատիկ որերս կկայանա Գործարանա-

յին կոմիտաների Կենտրոնական խորհրդի պատգամավորների և սոցիալիստիկներների նախաձեռնող խմբակի ժիցյալ նիստ» («Известия ЦИК», 1917 թ. հոկտեմբերի 10 (սեպտեմբերի 27)-ի էլ-ը):

\*  
\*\*

Մեզ ասում են, թե պրոլետարիատը չի կարողանա շարժման մեջ դնել պետական ապարատը:

1905 թվի հեղափոխությունից հետո Ռուսաստանը կառավարում եյին 130.000 կարգածատերեր, կառավարում եյին 150 միլիոն մարդկանց նկատմամբ անթիվ բռնություններ գործադրելու միջոցով, նրանց անսահման ծաղրանքի յինթարկելու միջոցով, հսկայական մեծամասնությունը տաճանակիր աշխատանքի և կիսաքաղց գոյության հարկադրելու միջոցով:

Յեզ Ռուսաստանը, իր թե, չպիտի կարողանան կառավարել բոլշևիկների կուսակցության 240.000 անդամները, կառավարել հոգուած չքաղցրների և ընդդեմ հարուստների. Այդ 240.000 մարդկեր այժմ արդեն իրենց կողմն ունեն չափահաս բնակչության մի միլիոն ձայնից վոչ պակաս, վորովհետեւ կուսակցության անդամների թվի և նրան տված ձայների թվի միջև հենց այդպիսի փոխհարաբերություն են գտնել Յեկարպայի փորձի և Ռուսաստանի փորձի, թեկուզ հենց, որինակ՝ Պիտերի դումայի ոգոստոսի. Յեզ ահա մենք ունենք ընտրությունների փորձի հիման վրա: Յեզ ահա մենք ունենք «պետական ապարատ»՝ բաղկացած մեկ միլիոն մարդկանցից, վորոնք նվիրված են սոցիալիստական պետությանը գաղափարապես և վոչ թե յուրաքանչյուր ամսի 20-ին մի խոշոր գումար ստանալու համար:

Այդ դեռ քէ ե, մենք ունենք մի «հրաշալի միջոց» մեկն, մի հարվածով տանտպակիլու մեր պետական ապարատը, — մի միջոց, վորպիսին վոչ մի կապիտալիստական պետություն վոչ մի ժամանակ չի ունեցել իր արամազրության տակ և ունենալ չի կարող: Այդ հրաշալի գործը — աշխատավորներին, չքավորներին պետություն կառավարելու ամենորյա աշխատանքին մասնակից դարձնելն եւ:

Վորպիսովի պարզենք՝ ինչքան հեշտ գործադրելի յետ հրա-

շալի միջոցը, ինչքան անսխալ եւ նրա ներգործությունը, վերցնենք կարելույն չափ հասարակ և ակնրախ մի որինակ:

Պետությանը հարկավոր և մի բնակարանից ստիպողաբար վտարել վորոշ ընտանիք և նրա տեղը բնակեցնել մեկ ուրիշը: Այս բանն ամենուրեք անում և կապիտալիստական պետությունը, այս բանն անելու յետ և մեր պրոլետարական կամ սիստական պետությունը:

Կապիտալիստական պետությունը տնից վտարում եր աշխատավորին կորցրած և վարձը չմուծած բանվորների ընտանիքը: Գալիս ե զատական կատարածուն (պրիստավը), վոստիկանը կամ միլիցիականը, դրանց մի ամբողջ դասակի Բանվորական թաղում, վտարում կատարելու համար, հարկավոր և կաղակների մի ջոկատ: Ի՞նչու վորովհետեւ պրիստավը ու «միլիցիականը» հքածարվում են գնալ առանց շատ մեծ ուժ ներկայացնող զինվորական պահակախմբի: Նրանք գիտեն, վոր վտարման տեսարանը հարուցանում և այնպիսի կատաղի չարություն ամբողջ շրջակայքի բնակչության մեջ, հազարավոր և հազարավոր համարյա հուսահատության հասցըած մարդկանց մեջ, այնպիսի ատելություն դեպի կապիտալիստները և կապիտալիստական պետությունը, վոր պրիստավին և միլիցիականների գասակին ամեն բոլե կարող են կտոր-կտոր անել Հարկավոր են մեծ զինվորական ուժեր, հարկավոր և մեծ քաղաք բներել միքանի գունդ վորեն հեռավար ծայրերկրից, վորպիսովի զինվորներին չկարողանան «վարակել» սոցիալիզմով:

Պրոլետարական պետությանը հարկավոր և չափազանց կաթիքավոր մի ընտանիք ստիպողաբար բնակեցնել մի հարուստ մարդու բնակարանում: Բանվորական միլիցիայի մեր ջոկատը բաղկացած է, դիցուք, 15 հոգուց: յերկու նավաստի, յերկու զինվոր, յերկու զիտակից բանվոր (վորոնցից թող միայն մեկը լինի մեր կուսակցության անդամ կամ նրան համակրող), ապա 1 ինտելիգենա և 8 հոգի աշխատավոր չքավորներից, վորոնց թվում անպայման վոչ պակաս, քան 5 կին, սպասավոր, սեագործ բանվոր և այլն: Զոկատը գալիս ե հարստի բնակարանը, զննում ե, գտնում վոր յերկու տղամարդ և յերկու կին ունեն հինգ սելլակի—«Դուք այս ձմեռ յերկու սենյակում տեղավորվեցեք, քա-

Դաքտցիներ, իսկ յերկու սենյակը պատրաստեցնք նկուղից յերկու ընտանիք այդ սենյակները փոխադրելու համար: Ժամանակավորապես, մինչև վոր մենք ինժեներների ոգնությունը (դուք, կարծեմ, ինժեներ եք) լավ բնակարաններ կլասուցենք բոլորի համար, դուք անպայման պետք է սեղմինք: Չեր հեռախոսը կծառայի 10 ընտանիքի: Այդ կինայի մոտ 100 ժամկա աշխատանք, վաղվառուք խանութից խանութ և այլն: Այնուհետև ձեր ընտանիքում կա յերկու չղբաղված կիսաբանվոր, վորոնք կարող են թեթև աշխատանք կատարել՝ 55 տարեկան մի քաղաքացունի և 14 տարեկան մի քաղաքացի: Նրանք որական ծամեկերթապահնեն, վորպեսզի նակեն 10 ընտանիքի համար մթերքների ճիշտ բաշխում կատարելու գործը և կատարեն դրա համար անհրաժեշտ գրադրությունը: Մեր ջոկատում գտնվող քաղաքացիներ սևսանողը հիմա կդրի այս պետական հրամանի տեքստը յերկու որինակից, իսկ դուք բարի կինեք տալ մեղ սուրագրություն, վոր պարտավորվում եք ճշտությամբ կատարել այս հրամանը:

Այսպես կարող եր լինել իմ կարծիքով ակնառու որինակներով ցուցադրված տարբերությունը հինգ բուրժուական, և նոր սոցիալիստական պետական ապարատի և պետական կառավարչության միջև:

Մենք ուսուլիստներ չենք: Մենք գիտենք, վոր ուղածդ սեագործ բանվորը և ուղածդ խոհարարութին ընդունակ չեն իսկույն ենթանցնել պետություն կառավարելու գործին: Այս բանում մենք համաձայն ենք թե կազետների, թե Բրեշկովսկայայի, և թե Ծերեթելու հետ: Բայց մենք տարբերվում ենք այդ քաղաքացիներից նրանով, վոր պահանջում ենք անմիջապես հրաժարվել այն նախաղաշարմունքից, թե իբր պետություն կառավարել, կառավարման առորյա, ամենորյա աշխատանք կատարել կարող են միայն հարուստները կամ հարուստ ընտանիքներից վեցըրած պաշտոնյաները: Մենք պահանջում ենք, վոր պետական կառավարչություն ուսուցանելու գործը վարեն գրանցությունը ու դինվորները, և վոր այդ գործն սկսվի անհապաղ, այսինքն այդ գործը սովորելուն անմիջապես սկսն մասնակից դարձնել բոլոր աշխատավորներին, բոլոր չքավորներին:

Մենք գիտենք, վոր կադետներն ել համաձայն են ժողովը

դին դեմոկրատիզմ սովորեցնելուն: Կարետների տիկինները համաձայն են, լավագույն անդիմական և ֆրանսական աղբյուրներից ոգտվելով, դասախոսություններ կարդալ սպասութիներին՝ կանոնց իրավահավաքության մասին: Ինչպիս նաև առաջիկա համերգ-միտինգում, հաղարավոր մարդկանց առաջ, եստրադի վրա համբուրման տեսարան կապքվի՝ կաղետ կին-գասախոսը կհամբուրը Բրեշկովսկայային, Բրեշկովսկայան—նախկին մենիստը Ծերեթելուն, և զնորհակալ ժողովուրդն այդպիսով տռարկայորեն կսովորի, թե ինչպիսին և հանրապետական հավասարությունը, աղատությունը և յեղայրությունը...

Այս, մենք համաձայն ենք, վոր կադետները, Բրեշկովսկայան և Ծերեթելին, իրենց հասկացած ձևով, նվիրված են գեուկատիզմին և քարոզում են այն ժողովրդի մեջ: Բայց ինչ անենք, յերբ մենք փոքրինչ այլ պատկերացում ունենք դեմոկրատիզմի մասին:

Մեր կարծիքով, պատերազմի ստեղծած չսված դժվարությունները և աղետները թեթևացնելու, ինչպես և այն ամենասոսկալի վերքերը թժշկելու համար, վոր պատերազմը հասցըել և ժողովրդին, հարկավոր և նեղափոխական գեմոկրատիզմ, հարկավոր են հենց այն տեսակի նեղափոխական միջոցներ, ինչպես, որինակի համար, մեր նկարագրած բնակելի սենյակների բաշխումն և հոգուտ չքավորների: Ճիշտ այդպես հարկավոր և վարվել թե քաղաքում, թե՛ զյուղում պարենավորման մթերքների, հագուստի, վունամանի հետ և այլն, զյուղում հողի հետ և այլն: Այս զոգով պետություն կառավարելու գործին մենք կարող ենք մեկնենաւակից դարձնել մի պետական ապարատ՝ քաղացած տաս, յեթե վոչ քան միլիոն մարդուց, մի ապարատ, վորպիսին տեսնված մի կապիտալիստական յերկուում: Այդ ապարատը միայն մենք կարող ենք ստեղծել, վորովհետև մեղ համար ապահովված և ընակչության հսկայական մեծամասնության լիակատար և անվերապահ համակրանքը: Այդ ապարատը միայն մենք կարող ենք ստեղծել վորովհետև մենք ունենք գիտակից, կապիտալիզմին յերկար ժամանակ «աշակերտելու» շնորհիվ կարգապահության վարժված (գուրչ չեր, վոր մենք աշակերտեցինք կապիտալիզմին) բանվորներ, վորոնք իվինակի լին ստեղծելու բանվորական միլիցիա և ասինտերաք

լայնացնելու այն (լայնացնելու գործն անմիջապես ձեռնարկելով), վերածելով համաժողովրդական միջիքայի: Գիտակից բանվորները պետք ե զեկավարեն, բայց կառավարման գործին նրանք իվեցակի յեն մասնակից դարձնել աշխատավորների և ճնշվածների բակական մասսաներին:

Հասկանալի յե, վոր այս նոր ապարատի առաջին քայլերում սխալներն անխուսափելի յեն: Բայց միթե սխալներ չեյին գործում պյուղացիները, յերբ նրանք ճորտատիրական իրավունքից ազատազրվում եյին և սկսում եյին իրենց ուժերով վարել իրենց գործերը: Միթե ինքն իրեն կառավարելու գործը ժողովրդին սովորեցնելու, սխալներից ազատվելու այլ ճանապարհ կարող ե գոյությունն ունենալ, բացի պրակտիկայի, ճանապարհից, բացի անհապաղ իսկական ժողովրդական ինքնավարության գիմելուց: Հիմա ամենազլխավորն ե—հրաժեշտ տալ այն բուրժուական ինտելիգենտական նախապաշարմունքին, թե իրը պետություն կառավարել կարող են միայն հատուկ պաշտոնյաները, վորոնք ամբողջապես կախված են կապիտալից՝ իրենց ամբողջ հասարակական կացությամբ: Ամենազլխավորն ե—վերջ դնել իրերի այնպիսի դրության, յերբ փորձում են կառավարել առաջիկա բուրժուակաները, չինովակիները և «ասոցիալիստական» մինիստըրները, բայց կառավարել չեն կարողանում, ու Դ ամսից հետո գյուղացիական յերկրում ստանում են գյուղացիական ապատամություններին!! Ամենազլխավորն ե—ճնշվածներին ե աշխատավորներին հավատ ներշնչել դեպի իրենց ուժերը, գործնականում ցույց տալ նրանց, վոր նրանք կարող են և պարտավոր են ինքներն անցնել հացի, ամեն տեսակ սննդեղինի, կաթի, հագուստի, բնակարանի և այլն նիւթ, խստագույնս կարգավորված, կազմակերպված բաշխման՝ նոգուս չխալիքների: Առանց այս բանի Ռուսաստանի համար չկա փրկություն կրախից և կորստից, իսկ կառավարման գործը բարեխիղճ, համարձակ և ամենուրեք պըռլետարների ու կիսապրոլետարների ձեռքը տալուն անցնելը կտապատության մեջ չտեսնված՝ մասսաների այնպիսի հեղափոխական խանդակավառություն, այնքան անգամ կրազմապատկի ժողովրդական ուժերն աղետների գեմ կովելու գործում, վոր շատ բան, վորն անկարելի յե թվում մեր սահմանափակ, հին, բյուրոկրատիկ

ուժերի համար, իրագործելի կդառնա այն միլիոնավոր մասսայի ուժերի համար, վորն սկսում ե աշխատել իր համար և վոչ թե կապիտալիստների, վոչ թե աղայի դավակների, վոչ թե չինովնիկի համար, վոչ թե մտրակի սպառնավորի առակ:

\*  
\*\*

Պետական ապարատի հարցին ե վերաբերում նաև ցենտրալիզմի հարցը, վորն առանձնապես յեպահպուն և առանձնապես անհաջող կերպով բարձրացրել ե ընկ. Բազարովը «Հօնա Ժիշն»-ի հոկտեմբերի 10 (սեպտեմբերի 27)-ին № 138-ում «Բոլցեկիկները և իշխանության պրոբլեմը» հոդվածում:

Ընկ. Բազարովն այսպես ե դատում: «Խորհուրդները պետական կյանքի բոլոր բնագավառներին հարմարեցված ապարատ չեն, վորովհետեւ յոթնամյա փորձը իրը թե ցույց տվեց, «Պետերբուրգի գործադիր կոմիտեյի տնտեսական բաժնում գտնվող տասնյակ և հարյուրավոր փաստական տվյալներ» հաստատեցին, վոր Խորհուրդները, թեև շատ տեղերում փաստորեն ողտվել են «լիակատար իշխանությամբ», «քայլքայման գեմ մղվող պայքարի առարկեղում չկարողացան հասնել փոքրիշատե գոհացուցիչ արդյունքների»: Անհրաժեշտ ե մի ապարատ, վոր «բաժանված վինի ըստ արտադրության ճյուղերի, խիստ կենտրոնացած լինի յուրաքանչյուր ճյուղի սահմաններում և յենթարկված լինի մի համապետական կենտրոնի»: «Խոսքը՝ վերաբերում ե»—գիտեք ի՞նչ—«վոչ թե հին ապարատը փոխելուն, այլ այն բարենորոգելուն... ինչքան ել վոր բոլցեկները ծաղրելու լինեն պլան ունեցող մարդկանց»...

Ընկեր Բազարովի այս բոլոր դատողություններն ուղղակի զարմանալիորեն անճարակ են, վորպես մի բեկորը բուրժուազիայի զատողությունների, արտացոլումը նրա դասակարգային տեսակետի:

Յեկ իրոք: Ասել թե Խորհուրդները թեկուղ Ռուսաստանի վորեւ վայրում, թեկուղ վորեւ ժամանակ ողտվել են «լիակատար իշխանությամբ», այլ պարզապես ծիծաղնելի յե (յեթե այդ կապիտալիստների շահագիտական-դասակարգային ստի կրկնությունը չե): Իշխանության տմբողջ լիակատարությունը պահան-

շում և իշխելու իրավունք՝ բոլոր հողերի նկատմամբ, բոլոր բանեկերի նկատմամբ, բոլոր ֆարբիկաների նկատմամբ, պատմության փորձին և քաղաքականության ու նկոնոմիկայի կապի վերաբերյալ գիտության տվյալներին փոքրիչատե ծանոթ մարդը չեր կարող ուղարկած այս «փոքրիկ» համեմանքը:

Բուրժուազիայի կեղծ գործելակերպը կայանում և նրանում, վոր նա, իշխանությունը և նորհուրդներին չտալով, սարութիւննարկելով նրանց յուրաքանչյուր լուրջ քայլը կառավարությունն իր ձեռքին պահելով, պահելով իշխանությունը թե հողի, թե բանկերի և այնի նկատմամբ, քայլքայման հանցանքը և նորհուրդների վրա յե գցում!! Հենց սրանում և կայանում նաև կոակցիայի ամբողջ տիտուր փորձը:

Խորհուրդները յերեք լիակատար իշխանություն չեն ունեցել և վոչինչ բացի պալիատիվներից ու չփոթն ուժեղացնելուց նրանց միջոցառումները չեն կարող տալ:

Ապացուցել բոլենիներին, —վորոնք ցենտրալիստ են իրենց համոզմունքով ու ծրագրով և իրենց ամբողջ կուսակցության տակտիկայով, —ցենտրալիզմի անհրաժեշտությունը, նշանակում է իսկապես բաց գուռ բաղիւել թեթև «Новая Жизнь»-ի գրողներն իրազվում են այս պարապ զբաղմունքով, այդ միայն նրա հաշվադրում է այս պարապ զբաղմունքով, այդ միայն նրա հաշմար, վոր նրանք բոլորովին չհասկացան իմաստն ու նշանակությունն այն ծաղրի, վորին յենթարկում ենք մենք նրանց «համապետական» տեսակեալը: Իսկ այդ բանը նովոժիզնականները չհասկացան այն պատճառով, վոր զասակարգային կովի ուսմունքը նրանք ընդունում են միայն որպահներով և վոչ թե ուղեղով: Կրկնելով դասակարգային կովի վերաբերյալ սերտած խոսքերը՝ նրանք ամեն վայրկյան գլորվում են թեորիապես զվարճալի, գործնականապես ուեակցիոն «վերդասակարգային տեսակետի», իրենց այդ ստուգաքարշությանը բուրժուազիայի հանգեպ՝ «համապետական» պլան անունը տալով:

Պետությունը, սիրարժան մարդիկ, դասակարգային հասկացողություն եւ: Պետությունը մի դասակարգի բռնության որդան կամ մեքենայ յե մյուսի նկատմամբ թանինա մեքենա յե բուրժուազիայի բռնության պլութարքիատի նկատմամբ, պրոլետարական միակ լուղունք կմնա այդ պետության կործանումը: Իսկ յերբ պե-

տությունը լինի պրոլետարական, յերբ նա կլինի պրոլետարիատի բռնության մեջենա բուրժուազիայի նկատմամբ, այն ժամանակ մենք ամբողջովին և անպայման կպաշտպանենք ամուր իշխանությունը և ցենտրալիզմը:

Ավելի մատչելի խոսելով՝ մենք վոչ թե «պլանների» վրա յենք ծիծաղում, այլ այն բանի վրա, զոր Բազարովն ու Էնկլին հասկանում, թե ժխտելով «բանվորական կոնտրոլ», ժխտելով «պրոլետարիատի դիկաստուրան», նրանք պատշաճում են բուրժուազիայի դիկաստուրան: Միջին գիծ չկա, միջինը մանր բուրժուական դեմոկրատի դատարկ պատրանքն եւ:

Խորհուրդների ցենտրալիզմը դեմ, նրանց միավորման դեմ վոչ մի կենտրոն, վոչ մի բոլենիկ յերեք չի վիճեր ըստ արտադրության ճյուղերի՝ գործարանային կոմիտեներ կազմելու և նրանց ցենտրալիզացիայի դեմ մեզնից վոչ վոք չի առարկում: Բազարովի գնդակը կողից և անցնում:

Մենք ծիծաղում ենք, ծիծաղել ենք և կծիծաղենք վոչ թե ցենտրալիզմի և վոչ ել «պլանների» վրա, այլ ոեֆորմիզմի վրա: Վորովինեաւ ձեր ոեֆորմիզմը կրկնապատիկ ծիծաղելի յե՝ կուլցիցիայի փորձից հետո: Իսկ ասել՝ «վոչ թե ապարատի փոփոխում, այլ նրա բարեփոխում», նշանակում է լինել ոեֆորմիստ, նշանակում է դառնալ վոչ թե հեղափոխական, այլ ոեֆորմիստական գեմոլիրատ: Մեֆորմիզմը վոչ այլ ինչ եւ, բայց յեթե կառավարող դասակարգի գիծումները և վոչ թե նրա տապալումը, նրա զիջումները՝ իշխանությունն իր ձեռքին պահելով հանգերձ:

Այս հենց այն եւ, վոր փորձված և կիսամյա կուլցիցիայի միջոցով:

Մենք հենց սրա վրա յենք ծիծաղում: Բազարովը, առանց խորը մտածելու դասակարգային կովի ուսմունքի վրա, թույլ և տալիս, վոր բուրժուազիան ոգտագործի իր սխալը, խմբովին յերգելով՝ «այ, այ, մենք ել հենց բարեփոխման եւ, վոր դեմ չենք, մենք կողմանակցից ենք, վոր բանվորները մասնակցեն համապետական կոնտրոլին, մենք միանգամայն համաձայն ենք», և բարի Բազարովին ոյլեկիվառեն կապիտալիստների արձագանքի դեր և խաղում:

Միշտ այդպես և յեղեր միշտ այդպես կլինի այն մարդկանց

գրաւթյունը, ովքեր սուր դասակարգային կովի պայմաններում կփորձեն բռնել «միջին» դիրք: Յեզ հենց այն պատճառով, վոր «Новая Жизнь»-ի գրողները իւլինակի չեն հասկանալու դասակարգային կոիվը, նրանց քաղաքականությունն այնպիսի ծիծառելի, հավիտենական տատանում և բուրժուազիայի և պրոլետարիատի միջև:

Զեռնարկեցիք «պլաններ» կազմելու գործը, սիրարժան քաղաքացիներ, այդ քաղաքականություն չե, այդ դասակարգային կովի գործ չե, և այդուղ դուք կարող եք ժողովրդին ոգուտ տալ Զեր թերթը բազմաթիվ տնտեսագետներ ունի: Միացեք այնպիսի ինժեներների և այլ մարդկանց հետ, վորոնք պատրաստ են աշխատելու արտադրության և բաշխման կարգավորման հարցերի վրա, ձեր մեծ «ապարատի» (լրագրի) ներդրյալ թերթը հատկացրեք մթերքների արտադրության և բաշխման (Ռուսաստանում), բանկերին ու սինդիկատներին և այն, և այն վերտբերյալ ձըշ-գրիա ավյալների գործնական մշակմանը—ահա թե ինչով դուք ոգուտ կրերեք ժողովրդին, ահա թե վորոնդ յերկու աթոռի միջև նստելու ձեր վարքագիծն այնքան ել մշասակար չի լինի, ահա թե «պլանների» վերաբերյալ ինչպիսի աշխատանքն ե, վոր կհարուցի բանվարների վոչ թե ծագրը, այլ շնորհակալությունը:

Յերբ պրոլետարիատը հաղթի, այսպես կանի. նա տնտեսագետներին, ինժեներներին, ագրոնոմներին և այլոց բանվորական կազմակերպությունների կոնցերնի տակ կլծի «պլանի» մշակման, նրա ստուգման, կենարոնացմամբ աշխատանքի խնայողության միջոցներ գտնելու, ամենապարզ, եժան, հարմար և ունիվերսալ կոնտրոլի միջոցներ ու յեղանակներ գտնելու գործին: Այս բանի համար մենք տնտեսագետներին, վիճակագիրներին, տեխնիկներին լավ փող կվճարենք, բայց... բայց մենք նրանց հայց հարամ կանենք, յեթե նրանք այդ աշխատանքը չկատարեն բարեխղճարար և ամբողջապես նոզուտ աջատավորների:

Մենք ցենարալիզմի և «պլանի» պաշտպան ենք, բայց պրոլետարիան պետության ցենտրալիզմի և պլանի, արտադրության և բաշխման պրոլետարական կարգավորման ցենտրալիզմի ու պլանի հոգուտ չքավորների, աշխատավորների ու շահագործվողների, ընդդիմ շահագործողների: «Համապետական» բառի տակ մենք

համաձայն ենք հասկանալ միայն այն, ինչ կոտրում և կապի-տականների դիմադրությունը, ինչ բովանդակ իշխանությունը առկի և ժողովրդի մեծամասնությանը, այսինքն պրոլետարիատին և կիսապրոլետարիատին, բանվորներին և ամենաչքավոր գյուղացիներին:

\*  
\*\*

Հինգերորդ փաստարկում կայանում և նրանում, վոր բոլցեկներն իշխանությունը չպիտի կարողանան իրենց ձեռքին պահել, վորովհետև «իրազրությունը բացառիկ կերպով բարդ ե...».

Ո՛, իմաստուններ: Նրանք, թերեւս, պատրաստ են հաշտվել հեղափոխության հետ, միայն թե առանց «բացառիկ բարդ իրավության»:

Այդպիսի հեղափոխություններ չեն լինում, և այդպիսի հեղափոխության հասցեյին ուղղված թառանչների մեջ վոչինչ, բացի բուրժուական ինտելիգենտի ուեակցիոն վայնասուններից, չկա: Յեթե հեղափոխությունը նույնիսկ սկսվել և այնպիսի պայմաններում, վորոնք շատ բարդ չեն թվում, ապա ինքը հեղափոխությունն իր զարգացման ընթացքում միօտ ստեղծում և բացառիկ բարդ պայմաններ: Վորովհետև հեղափոխությունը, ինչպես Մարքսըն և ասում իսկական, խորունկ, «Ժողովրդական» հեղափոխությունը աներեւակայելի բարդ և տանջալից պրոցես և, հնի մահացման և նոր հասարակակարգի, տասնյակ միլիոնավոր մարդկանց կենսաձևի ծննդյան պրոցես: Հեղափոխությունն անենասուր, կատաղի, մոլեգին գասակարգային կոիվ և քաղաքացիական պատերազմ և: Պատմության մեջ մի մեծ հեղափոխություն առանց քաղաքացիական պատերազմի չի յեղեր իսկ մտածել, թե քաղաքացիական պատերազմը յերևակայելի յե առանց «բացառիկ բարդ իրավության», —այսպես մտածել կարող են միայն ֆուլույարավոր մարդիկ:

Յեթե չլիներ բացառիկ բարդ իրազրություն, ապա չեր լինի և հեղափոխություն: Դայլից վախեցողն անտառ չի գնա:

Հինգերորդ փաստարկման մեջ քննելու բան չկա, վորովհետև այդպես չկա վոչ տնտեսական, վոչ քաղաքական, վոչ ել առհասքակ վորեւ այլ միաց: Դրա մեջ կա միայն հեղափոխու-

թյան պատճառով տիրած և հեղափոխությունից վախեցած մարդկանց թառանչ: Թույլ եմ տալիս ինձ, այդ թառանչը բնորոշելու համար, ըերեւ յերկու փոքրիկ անձնական հիշողություն:

Զըռույց մի հարուստ ինժեների հետ՝ հուլիսյան որերից փոքր ինչ ասած: Ինժեները մի ժամանակ հեղափոխական ե յեղեւ, յեղեւ և սոցիալ-դիմոկրատական և նույնիսկ բոլենիկյան կուսակցության անդամ: Այժմ նա իր վողջ եյությամբ — միայն յերկուող, միայն գաղաղութիւն և փոթորկվող և անսանձահարելի բանվորների նկատմամբ: Յեթի դրանք գոնե լինելին այնպիսի բանվորներ, ինչպես գերմանական բանվորներն են, — ասում ե նա (կըթված, արտասահմանում յեղած մի մարդ), — յես, ինարկե, առհասարակ հասկանում եմ սոցիալական հեղափոխության անխուսափելիությունը, բայց մեղ մոտ, բանվորների մակարդակի այն իջեցման պայմաններում, վոր պատերազմն ե բերել... այդ վոչ թե հեղուփոխություն ե, այլ — խորիորատ:

Նա պատրաստ ե ընդունել սոցիալական հեղափոխությունը, յեթե պատմությունը տաներ գեղի այդ հեղափոխությունը նույնութան խաղաղ, հանգիստ, հարթ ու ակուրատ կերպով, ինչպես գերմանական ճեղընթաց գնացքն ե կայարանի մոտենում: Իրեն վայելուչ պահող կոնդուկտորը բացում ե վագոնի դռնակներն ու հայտարարում: «Կայարան՝ սոցիալական հեղափոխություն: Alle aussteigen (բոլորդ իջեք)!»: Այդ գեղքում ինչո՞ւ Տիտ Տիտիչների ժամանակավա ինժեների գրությունից չանցնել բանվորական կաղակերպությունների ժամանակվա ինժեների գրության:

Այդ մարդը գործադրույներ տեսած մարդ ե: Նա դիտե, թե կրքերի վորպիսի փոթորիկ ե առաջացնում միշտ, նույնիսկ ամենաշղաղ ժամանակ, ամենասովորական գործադրությունը: Նա, ինարկե, հասկանում ե, թե քանի միլիոն անգամ ուժեղ պետք ե լինի այս փոթորիկը, յերբ դասակարգային կոփվը վոտքի յի հանել հակայական յերկրի բալոր աշխատավոր մարդկանց, յերբ պատերազմն ու շահագործումը համարյա թե հուսահատության են հասցրել միլիոնավոր մարդկանց, վորոնց դարերով տանջել են կալվածատերերը, տասնամյակներով կողոպտել ու ծեծկել են կապիտալիստներն ու ցարական չինովլիկները: Նա հասկանում ե այս բոլորը «թեորիապես», ընդունում ե այս բոլորը միայն շըր-

թունքներով, նրան պարզապես վախեցրել ե «բացառիկ բարդ երաժշությունը»:

Հուլիսյան որերից հետո, շնորհիվ այն տաճաճնապես հոգաւտար ուշադրության, վորով պատվեց ինձ կերենսկու կառավարությունը, ինձ վիճակվեց ընդհատակայա դրության անցնել: Մեզ պեսներին, ինարկե, բանվորն եր թագցնում: Պիտերի հեռակոր բանվորական արվարձանում, բանվորական փոքրիկ բնակարանում մեղ ճաշ են մատուցում: Տանտիկինը հաց ե բերում: Տանտերն առում ե: «Ծն, ինչ սքանչելի հաց ե: «Երանք» հիմա յերևի չեն համարձակվում վատ հաց տալ: Քիչ եր մնացել վոր մոռանայինք, թե Պիտերում կարող են լավ հաց տալ»:

Ինձ ապշեցրեց հուլիսյան որերին այսպիսի դասակարգային գնահատական տալը: Իմ միտքը պատվում եր անցքի քաղաքական նշանակության շուրջը, կըսում եր այն գերը, վոր խաղալու ժա այդ անցքը անցքերի ընդհանուր ընթացքի մեջ քննության եր առնում այն հարցը, թե ինչ կացությունից ե ծագել պատմության այս զիգզագը և ինչ կացությունն աս կսեղծի, ինչպես պետք ե փոխենք մենք մեր լոգունգներն ու մեր կուսակցական ապարատը, վորպիսպի հարմարեցնենք այն փոխված դրությանը: Յես, կարիք չտեսած մարզ, հացի մասին չեյի մտածում: Հացն ինձ համար ինքն իրեն հրապարակ յեկավ, մոտավորապես գրական աշխատանքի կողմանի արդյունքի պես: Վորպիս ամեն բանի հիմք՝ հացի համար մղվող դասակարգային կովին միտքը հասնում ե քաղաքական վերլուծության անորինակ բարդ և խճճած ճանապարհով:

Իսկ ճնշված դասակարգի ներկայացուցիչը, թեկուզ և լով վարձատրվող և միանգամայն ինտելիգենտ բանվորներից մեկը, ձուկն ուղղակի գլխից ե բռնում այն զարմանալի պարզությամբ ու շիտակությամբ, այն հաստատուն վճռականությամբ, հայացքի այն զարմանալի պարզությամբ, վորից մենք, ինտելիգենտ մարդկան ինուայի դիմումը, ինչպես յերկնային տաղից: Վողջ աշխարհը բաժանվում է յերկու բանակի՝ «մենք», աշխատավորներս, և «նրանք» շահագործողները: Կատարվածի առթիվ անհանգության ստվեր անգամ չկա: յեղածը կարիտալի դեմ աշխատանքի

մղած յերկարատև կովի ճակատամտբաերից մեկն և՝ Փայտ կուտրելիս տաշեղներն աջ ու ձախ կթռչեն:

«Ե՞նչ տանջալից բան և հեղափոխության այդ «բացառիկ բարդ իրադրությունը»,—այսպես և մտածում և զգում բաւրժուական ինսեկտիկները:

«Մենք «նրանց» հուալ տվինք, «նրանք» չեն համարձակվի առաջիկա նման վկաի լինել: Ելի վոր զոր անենք — նրանց մեր ուսերից բոլորովին դեն կըլորենք»,—այսպես և մտածում և զգում բանվորը:

\* \* \*

Վեցերորդ և վերջին վաստարկումը — ուրութարբիտան «ընդունակ չի լինի դիմագրավելու թշնամական ուժերի բովանդակ ճնշումին, վորը կարբի-կտանի վոչ միայն՝ պրոլետարիատի գիկատուրան, այլև դրան ավելացրած ամբողջ հեղափոխությունը»:

Մի վախեցնեք, պարոններ, վախեցողը չենք: Մենք աեսել ենք այդ թշնամական ուժերը և նրանց ճնշումը հանձին կորնիլովաչինայի (վորից վշնչով չի տարբերվում կերենչինան): Թե պրոլետարիատն ու ամենաչքավոր գյուղացիությունը ինչպես սբիցտարավ կորնիլովաչինան, ինչ խորալի և անողնական զբության մեջ ընկան բուրժուազիայի կողմանիցները և առանձնապես հարուստ ու հեղափոխությանն առանձնապես «թշնամի» մանր կալվածատերերի տեղական շերտերի փոքրաթիվ ներկայացուցելները, այդ բոլորը տեսան, ժաղովուրդն այդ հիշում եւ Հոկտեմբերի 13 (սեպտեմբերի 30)-ի «Դելո Նարոդա»-ն, հորդորելով բանվորներին «մի կերպ տանել» կերենչինան (այսինքն կոնիլովաչինան) և կեղծված ծերեթելիտական Բուլիգինյան Դուման մինչև Սահմանադիր ժողով (վորը հրավիրվում և ապստամբող գյուղացիության դեմ ձեռք առնվոր «զինվորական միջոցների» պաշտպանության տակ), «Դելո Նարոդա»-ն հաճույքից խեղդվելով կրկնում է «Նորայ Ժամանություն»-ի հենց վեցերորդ վաստարկումը և մինչև խոպտելը բղավում է «Կերենսկու կառավարությունը վոչ մի դեմքում չի յենթարկվի» (Առօրնուրների իշխանությանը, բանվորների և գյուղացիների իշխանությանը, վորին «Դելո Նարոդա»-ն, ջարդարներից ու հբեատյացներից, միապետական-

ներից ու կադետներից հետ չմնալու համար, անվանում է «Տրոցկու և լենինի» իշխանություն, ահա թե ինչպիսի պրիորների յեն հասնում եներները)!!

Բայց վոչ «Նորա Ժամանություն» գիտակից բանվորներին չեն վախեցնի: «Կերենսկու կառավարությունը, — ասում եք գուք, — վոչ մի դեպքում չի յենթարկվի», այսինքն կկրկնի կորնիլովաչինան, յեթե խոսենք ավելի պարզ, վորոշ շիտակ: Յել «Դելո Նարոդա»-յում գրող պարոնները համարձակվում են ասել, իբր թե այդ կինի «քաղաքացիական պատերազմ», իբր թե գրանք — «սարսափիկի հեռանկարներ են»!

Վհջ, պարոններ, բանվորներին չեք խաբի: Այդ վոչ թե քաղաքացիական պատերազմ կինի, այլ մի խումբ կորնիլովանաների անհուսալի բունտ, յեթե նրանք ուզում են «չենթարկվել» ժողովրդին և, ինչ կուզի լինի, պրովիլացիայի յենթարկել նրան կըրկնելու լայն մասշտաբով այն, ինչ վիրորգում կատարվեց կորնիլովանաների նկատմամբ: Յերե եսերներն այդ են ուզում, յեթե եսերների կուսակցության անդամ կերենսկին այդ եւ ուզում — նա կարող և մոլեգնության հասցնել ժողովրդին: Բայց բանվորներին ու զինվորներին զուգ զրանով չեք վախեցնի, պարոններ:

Վժրալիսի անսահման լիտություն, խարդախեցին նոր Բուլիգինյան Դուման, խարդախումների միջոցով իրենց ունական վերցրին ուեակցիոն կառպերատորներին, զյուղական կուլակներին, պրանց վրա ավելացրին կապիտալիստներին ու կալվածատերերին (վորոնց ցենզուրի տարր են համարում) և կորնիլովանների այդ բանդայի հետ միասին՝ ուզում են խորտկել ժողովրդի կամքը, բանվորների և գյուղացիների կամքը:

Գյուղացիական յերկրում բանն այնաեղ են հասցըրել, վորամենուրեք լայն հոսանքով ծավալվում և գյուղացիական ապլուտոմբություն! Լավ մտածեք. 80 տոկոսով զյուղացիներից բաղկացած դեմոկրատիկ հանրապետության մեջ գյուղացիներին հասցեի են ապստամբության... Նույն այդ բանը «Դելո Նարոդա»-ն, Զերնովի լրագիրը, «սոցիալիստ-հեղափոխականների» որգանը, վոր հոկտեմբերի 13 (սեպտեմբերի 30)-ին անամոթություն ու նեցավ խորհուրդ տալ բանվորներին ու գյուղացիներին «տո-

մղած յերկարատև կովի ճակատամարտերից մեկն է: Փայտ կուտրելիս տաշեղներն աջ ու ձախ կթռչեն:

«Ե՞նչ տանջալից բան և հեղափոխության այդ «բացառիկ բարդ իրադրությունը», — այսպես և մտածում և դպում բաւրժուական ինտելիգենտը:

«Մենք «նրանց» հույս տվինք, «նրանք» չեն համարձակվի առաջվա նման լիտի լինել ելի վոր զոր անենք — նրանց մեր ուսերից բոլորովին դեն կղղորենք», — այսպես և մտածում և դպում բանվորը:

\* \* \*

Վեցերորդ և վերջին փաստարկումը — պըոլիտարիտան «ընդդունակ չի լինի դիմոգրավիլու թշնամական ուժերի բովանդակ ձնշումին, վորը կարբի-կտանի վոչ միայն՝ պըոլիտարիտի գիշտատութան, այլև դրան ավելացրած ամբողջ հեղափոխությունը»:

